Թիվ 1999/93/ԵՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչող՝ «Էլեկտրոնային նույնականացման եւ ներքին շուկայում էլեկտրոնային գործարքների համար տրաստային ծառայությունների մասին»

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2014 թվականի հուլիսի 23-ի

թիվ 910/2014 կանոնակարգ (ԵՄ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը եւ մասնավորապես՝ դրա 114-րդ հոդվածը,

հաշվի առնելով Եվրոպական հանձնաժողովից ստացված առաջարկը,

օրենսդրական ակտի նախագիծն ազգային խորհրդարաններ փոխանցելուց հետո,

հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի եզրակացությունը ([1]),

գործելով ընդունված օրենսդրական ընթացակարգին համապատասխան ([2]),

քանի որ՝

1) առցանց միջավայրում վստահության ձեւավորումը տնտեսական եւ սոցիալական զարգացման համար առանցքային նշանակություն ունի: Վստահության բացակայությունը, մասնավորապես իրավական որոշակիության թվացյալ բացակայության պատճառով սպառողներին, ձեռնարկություններին եւ պետական մարմիններին ստիպում է վարանել էլեկտրոնային եղանակով գործարքների իրականացման եւ նոր ծառայությունների ընդունման հարցում.

[1] ՊՏ C 351, 2012 թվականի նոյեմբերի 15, էջ 73:

[2] Եվրոպական պառլամենտի 2014 թվականի ապրիլի 3-ի դիրքորոշում (Պաշտոնական տեղեկագրում դեռեւս չհրապարակված) եւ Խորհրդի 2014 թվականի հուլիսի 23-ի որոշում:

2) սույն կանոնակարգով փորձ է արվում մեծացնել ներքին շուկայում էլեկտրոնային գործարքների նկատմամբ վստահությունը՝ քաղաքացիների, ձեռնարկությունների եւ պետական մարմինների միջեւ անվտանգ էլեկտրոնային փոխգործակցության համար ընդհանուր հիմք նախատեսելու միջոցով՝ այդպիսով բարձրացնելով Միության տարածքում պետական եւ մասնավոր առցանց ծառայությունների, էլեկտրոնային ձեռնարկատիրության եւ էլեկտրոնային առեւտրի արդյունավետությունը.

3) Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 1999/93/ԵՀ հրահանգը ([1]) վերաբերում էր էլեկտրոնային ստորագրություններին՝ առանց անվտանգ, վստահելի եւ դյուրօգտագործելի էլեկտրոնային գործարքների համար համապարփակ միջսահմանային եւ միջոլորտային շրջանակ տրամադրելու: Սույն կանոնակարգով կատարելագործվում եւ ընդլայնվում է այդ հրահանգի նորմատիվ իրավական բազան.

4) «Եվրոպայի թվային օրակարգ» վերտառությամբ Հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 26-ի հաղորդագրության մեջ թվային շուկայի մասնատվածությունը, փոխգործակցության բացակայությունը եւ կիբեռհանցագործությունների աճը նշվել են որպես թվային տնտեսության բարենպաստ հնարավորությունների պարբերաշրջանի հիմնական խոչընդոտներ: Հանձնաժողովն իր «ԵՄ քաղաքացիների իրավունքների խոչընդոտների վերացում» վերտառությամբ ԵՄ քաղաքացիության վերաբերյալ 2010 թվականի զեկույցում մեկ անգամ եւս ընդգծել է Միության քաղաքացիների՝ միասնական թվային շուկայի եւ միջսահմանային թվային ծառայությունների ընձեռած արտոնություններից օգտվելուն խոչընդոտող հիմնական խնդիրները լուծելու անհրաժեշտությունը.

5) Եվրոպական խորհուրդն իր 2011 թվականի փետրվարի 4-ի եւ 2011 թվականի հոկտեմբերի 23-ի եզրակացություններում կոչ է արել Հանձնաժողովին

[1] «Էլեկտրոնային ստորագրությունների համայնքային շրջանակի մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1999 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 1999/93/ԵՀ հրահանգ (ՊՏ L 13, 2000 թվականի հունվարի 19, էջ 12):

մինչեւ 2015 թվականը ստեղծել միասնական թվային շուկա՝ թվային տնտեսության առանցքային ոլորտներում սրընթաց առաջընթաց գրանցելու եւ ամբողջովին ինտեգրված միասնական թվային շուկայի խթանման նպատակով, առցանց ծառայությունների միջսահմանային օգտագործումը դյուրացնելու միջոցով՝ հատուկ ուշադրություն դարձնելով անվտանգ էլեկտրոնային նույնականացման եւ իսկորոշման գործընթացների դյուրացմանը.

6) Խորհուրդն իր 2011 թվականի մայիսի 27-ի եզրակացություններում կոչ է արել Հանձնաժողովին նպաստել միասնական թվային շուկայի զարգացմանը՝ ստեղծելով համապատասխան պայմաններ շուկայի զարգացման այնպիսի առանցքային խթանիչ գործոնների անդրսահմանային փոխադարձ ճանաչման համար, ինչպիսիք են էլեկտրոնային նույնականացումը, էլեկտրոնային փաստաթղթերը, էլեկտրոնային ստորագրությունները եւ էլեկտրոնային առաքման ծառայությունները, ինչպես նաեւ պայմաններ՝ Եվրոպական միության ամբողջ տարածքում էլեկտրոնային կառավարման փոխգործակցության ծառայությունների համար.

7) Եվրոպական պառլամենտն իր՝ «Էլեկտրոնային առեւտրի ներքին շուկայի ձեւավորումը ավարտելու մասին» ([1]) 2010 թվականի սեպտեմբերի 21-ի որոշման մեջ ընդգծել է էլեկտրոնային ծառայությունների, հատկապես էլեկտրոնային ստորագրությունների անվտանգության կարեւորությունը եւ համաեվրոպական մակարդակով բաց բանալիների ենթակառուցվածքի ստեղծման անհրաժեշտությունը եւ կոչ է արել Հանձնաժողովին ստեղծել եվրոպական տվյալների վավերականության ստուգում իրականացնող մարմինների համար դարպաս՝ էլեկտրոնային ստորագրությունների միջսահմանային փոխգործակցությունն ապահովելու եւ համացանցի օգտագործմամբ իրականացվող գործարքների անվտանգությունն ավելացնելու համար.

[1] ՊՏ C 50 E, 2012 թվականի փետրվարի 21, էջ 1:

8) Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 2006/123/ԵՀ հրահանգով ([1]) անդամ պետություններից պահանջվում է ստեղծել «սպասարկման միասնական կենտրոններ» (ՍՄԿ-ներ)՝ սպասարկման գործունեության եւ դրա իրականացման հասանելիության հետ կապված բոլոր ընթացակարգերի եւ ձեւակերպումների՝ հեռավար եւ էլեկտրոնային միջոցներով ու համապատասխան մարմինների համապատասխան ՍՄԿ-ների օգնությամբ դյուրին իրականացումն ապահովելու նպատակով: ՍՄԿ-ների օգնությամբ հասանելի շատ առցանց ծառայություն մատուցելու համար պահանջվում է էլեկտրոնային նույնականացում, իսկորոշում եւ ստորագրություն.

(9) շատ դեպքերում, քաղաքացիները չեն կարող օգտագործել իրենց էլեկտրոնային նույնականացումը մեկ այլ անդամ պետությունում իրենց ինքնությունը հաստատելու համար, քանի որ իրենց երկրի ազգային էլեկտրոնային նույնականացման համակարգերը չեն ճանաչվում այլ անդամ պետությունում: Այդ էլեկտրոնային խոչընդոտը թույլ չի տալիս, որ ծառայություն մատուցողները լիարժեքորեն օգտվեն ներքին շուկայի ընձեռած արտոնություններից: Փոխադարձաբար ճանաչված էլեկտրոնային նույնականացման միջոցները դյուրացնում են ներքին շուկայում բազմաթիվ ծառայությունների միջսահմանային մատուցումը եւ հնարավորություն ընձեռում ձեռնարկություններին գործելու միջսահմանային մակարդակով՝ առանց պետական մարմինների հետ փոխգործակցության հարցում բազմաթիվ խոչընդոտների բախվելու.

(10) Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 2011/24/ԵՄ հրահանգով ([2]) ստեղծվել է էլեկտրոնային առողջապահության համար պատասխանատու

[1] «Ներքին շուկայում ծառայությունների մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 2006/123/ԵՀ հրահանգ (ՊՏ L 376, 2006 թվականի դեկտեմբերի 27, էջ 36):

[2] «Միջսահմանային առողջապահության մեջ հիվանդների իրավունքների կիրառության մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2011 թվականի մարտի 9-ի թիվ 2011/24/ԵՄ հրահանգ (ՊՏ L 88, 2011թվականի ապրիլի 4, էջ 45):

ազգային մարմինների ցանց: Միջսահմանային առողջապահության անվտանգությունը եւ շարունակականությունը բարելավելու համար պահանջվում է, որ պատրաստվեն եւ ցանցում տեղադրվեն էլեկտրոնային առողջապահության տվյալների եւ ծառայությունների միջսահմանային հասանելիության վերաբերյալ ուղեցույցներ, այդ թվում՝ «միջսահմանային առողջապահության ոլորտում տվյալների փոխանցելիությունը հեշտացնելու համար նույնականացման եւ իսկորոշման համընդհանուր միջոցների ձեռնարկմանը» աջակցելու միջոցով: Էլեկտրոնային նույնականացման եւ իսկորոշման փոխադարձ ճանաչումն առանցքային գործոն է Եվրոպայի քաղաքացիների համար միջսահմանային առողջապահությունը իրականություն դարձնելու հարցում: Երբ մարդիկ ճանապարհորդում են բուժման նպատակով, անհրաժեշտ է, որ իրենց բժշկական տվյալները հասանելի լինեն բուժման երկրում: Դա պահանջում է կայուն, անվտանգ եւ վստահելի էլեկտրոնային նույնականացման համակարգ.

11) սույն կանոնակարգը պետք է կիրառվի Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 95/46/ԵՀ հրահանգով ([1]) նախատեսված անձնական տվյալների պաշտպանության հետ կապված սկզբունքների ամբողջական պահպանմամբ: Այս առումով, հաշվի առնելով սույն կանոնակարգով սահմանված փոխադարձ ճանաչման սկզբունքը, առցանց ծառայության իսկորոշումը պետք է վերաբերի միայն այն նույնականացման տվյալների մշակմանը, որոնք համարժեք են, տեղին եւ չափազանց շատ չեն այդ ծառայությանն առցանց հասանելիություն ապահովելու համար: Ավելին, թիվ 95/46/ԵՀ հրահանգով մշակման գաղտնիությանը եւ անվտանգությանը ներկայացվող պահանջները պետք է պահպանվեն տրաստային ծառայություն մատուցողների եւ վերահսկողություն իրականացնող մարմինների կողմից.

[1] «Անձնական տվյալների մշակման հետ կապված անհատների պաշտպանության եւ այդ տվյալների ազատ տեղաշարժի մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1995 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 95/46/ԵՀ հրահանգ (ՊՏ L 281, 1995 թվականի նոյեմբերի 23, էջ 31):

(12) սույն կանոնակարգի նպատակներից է անդամ պետությունների կողմից իսկորոշման համար օգտագործվող էլեկտրոնային նույնականացման միջոցների միջսահմանային օգտագործման առկա արգելքների վերացումը՝ առնվազն հանրային ծառայությունների մասով: Սույն կանոնակարգի նպատակը չէ միջամտել անդամ պետություններում ստեղծված՝ էլեկտրոնային ինքնության կառավարման համակարգերին եւ հարակից ենթակառուցվածքներին: Սույն կանոնակարգի նպատակն է անդամ պետությունների կողմից առաջարկվող միջսահմանային առցանց ծառայությունների հասանելիության համար անվտանգ էլեկտրոնային նույնականացման եւ իսկորոշման հնարավորության ապահովումը.

13) անդամ պետությունները պետք է ազատ լինեն առցանց ծառայությունների հասանելիության համար էլեկտրոնային նույնականացման նպատակով միջոցներ օգտագործելու կամ ներդնելու հարցում: Նրանք նաեւ պետք է հնարավորություն ունենան որոշելու, թե արդյոք արժե մասնավոր հատվածին ներգրավել այդ միջոցների ապահովման գործում: Անդամ պետությունները պետք է ազատված լինեն իրենց էլեկտրոնային նույնականացման համակարգերի մասին Հանձնաժողովին ծանուցելու պարտավորությունից: Առնվազն հանրային առցանց ծառայությունների կամ որոշակի ծառայությունների հասանելիության ապահովման նպատակով ազգային մակարդակով կիրառվող բոլոր կամ որոշ էլեկտրոնային նույնականացման համակարգերի կամ դրանց բացակայության մասին Հանձնաժողովին ծանուցելու ընտրությունը պատկանում է անդամ պետություններին.

14) սույն կանոնակարգով անհրաժեշտ է սահմանել էլեկտրոնային նույնականացման միջոցների ճանաչմանը եւ էլեկտրոնային նույնականացման համակարգերի ծանուցման եղանակներին վերաբերող որոշ պայմաններ: Այդ պայմանները պետք է անդամ պետություններին օգնեն ձեւավորելու անհրաժեշտ վստահություն միմյանց էլեկտրոնային

նույնականացման համակարգերի նկատմամբ եւ իրենց ծանուցված համակարգերում ներառված էլեկտրոնային նույնականացման միջոցների փոխադարձ ճանաչման հարցում: Փոխադարձ ճանաչման սկզբունքը պետք է կիրառվի, եթե ծանուցող անդամ պետության էլեկտրոնային նույնականացման համակարգը համապատասխանում է ծանուցման պայմաններին, եւ եթե ծանուցումը հրապարակվել է *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում*: Այնուամենայնիվ, փոխադարձ ճանաչման սկզբունքը պետք է միայն վերաբերի առցանց ծառայության իսկորոշմանը: Այդ առցանց ծառայությունների հասանելիությունը եւ դրանց վերջնական մատուցումը հայտատուին պետք է սերտորեն կապված լինեն ազգային օրենսդրությամբ սահմանված պայմաններով այդպիսի ծառայություններ ստանալու իրավունքի հետ.

15) էլեկտրոնային նույնականացման միջոցների ճանաչման պարտավորությունը պետք է վերաբերի միայն այն միջոցներին, որոնց նույնականացման տվյալների արժանահավատության մակարդակը համապատասխանում է տվյալ առցանց ծառայության համար պահանջվող մակարդակին հավասար կամ դրանից բարձր մակարդակին: Դրանից բացի, այդ պարտավորությունը կիրառվում է միայն այն դեպքում, երբ հանրային հատվածի տվյալ մարմինը այդ առցանց ծառայության հասանելիության ապահովման համար օգտագործում է նույնականացման տվյալների արժանահավատության «զգալի» կամ «բարձր» մակարդակ: Անդամ պետությունները պետք է ազատ լինեն Միության իրավունքին համապատասխան նույնականացման տվյալների արժանահավատության առավել ցածր մակարդակ ունեցող էլեկտրոնային նույնականացման միջոցները ճանաչելու հարցում.

16) նույնականացման տվյալների արժանահավատության մակարդակները պետք է բնութագրեն էլեկտրոնային նույնականացման միջոցների նկատմամբ վստահության աստիճանը անձի ինքնությունը հաստատելու մասով՝ այդպիսով երաշխավորելով, որ կոնկրետ ինքնություն վկայակոչող

անձը փաստացի այն անձն է, որին վերագրվել է այդ ինքնությունը: Տվյալների արժանահավատության մակարդակը կախված է վստահության այն աստիճանից, որն ապահովում են էլեկտրոնային նույնականացման միջոցները անձի վկայակոչած կամ հաստատված ինքնության մասով՝ հաշվի առնելով գործընթացները (օրինակ՝ ինքնության ապացուցում, ստուգում եւ իսկորոշում), կառավարման գործունեությունը (օրինակ՝ էլեկտրոնային նույնականացման միջոցներ տրամադրող կազմակերպությունը եւ այդպիսի միջոցների տրամադրման ընթացակարգը) եւ ներդրված տեխնիկական վերահսկողության միջոցները: Առկա են տվյալների արժանահավատության մակարդակների տարբեր տեխնիկական սահմանումներ եւ նկարագրություններ՝ որպես Միության կողմից ֆինանսավորվող լայնամասշտաբ փորձնական միջոցառումների, ստանդարտացման եւ միջազգային գործունեության արդյունք: Մասնավորապես լայնամասշտաբ փորձնական ՍԹՈՐՔ եւ ԻՍՕ 29115-ը, ի թիվս այլնի, վերաբերում են 2-րդ, 3-րդ եւ 4-րդ մակարդակներին, որոնք պետք է առավելագույնս հաշվի առնվեն սույն կանոնակարգի իմաստով ցածր, զգալի եւ բարձր արժանահավատության մակարդակների համար նվազագույն տեխնիկական պահանջներ, ստանդարտներ եւ ընթացակարգեր սահմանելիս՝ միաժամանակ ապահովելով սույն կանոնակարգի հետեւողական կիրառումը, մասնավորապես որակավորման հավաստագրերի տրամադրման համար ինքնության հաստատման հետ կապված արժանահավատության բարձր մակարդակի մասով: Սահմանված պահանջները պետք է լինեն տեխնոլոգիապես չեզոք: Տարբեր տեխնոլոգիաների միջոցով պետք է հնարավոր լինի ապահովել անվտանգության անհրաժեշտ պահանջները.

17) անդամ պետությունները պետք է խրախուսեն մասնավոր հատվածի կողմից նույնականացման նպատակներով էլեկտրոնային նույնականացման միջոցների կամավոր օգտագործումը ծանուցված համակարգով, երբ դա

անհրաժեշտ է առցանց ծառայությունների կամ էլեկտրոնային գործարքների համար: Այդպիսի էլեկտրոնային նույնականացման միջոցներ օգտագործելու հնարավորությունը մասնավոր հատվածին թույլ կտա հենվել շատ անդամ պետություններում առնվազն հանրային ծառայությունների համար արդեն լայնորեն կիրառվող էլեկտրոնային նույնականացման եւ իսկորոշման գործընթացների վրա, ինչպես նաեւ ընկերությունների ու քաղաքացիների համար հեշտացնել իրենց առցանց ծառայությունների անդրսահմանային հասանելիությունը: Մասնավոր հատվածի կողմից այդպիսի էլեկտրոնային նույնականացման միջոցների անդրսահմանային օգտագործումը հեշտացնելու համար որեւէ անդամ պետության կողմից տրամադրված իսկորոշման հնարավորությունը պետք է հասանելի լինի այդ անդամ պետության տարածքից դուրս հիմնադրված՝ մասնավոր հատվածի վրա հիմնվող կողմերին նույն պայմաններով, որոնք կիրառվում են անդամ պետության տարածքում հիմնադրված՝ մասնավոր հատվածի վրա հիմնվող կողմերի առնչությամբ: Հետեւաբար մասնավոր հատվածի վրա հիմնվող կողմերի հետ կապված՝ ծանուցող անդամ պետությունը կարող է սահմանել իսկորոշման միջոցների հասանելիության պայմաններ: Իսկորոշման միջոցների հասանելիության պայմանները կարող են տեղեկություններ պարունակել այն մասին, թե արդյոք ծանուցման համակարգին առնչվող իսկորոշման միջոցները ներկայումս հասանելի են մասնավոր հատվածի վրա հիմնվող կողմերին, թե՝ ոչ.

18) սույն կանոնակարգով նախատեսվում է ծանուցող անդամ պետության, էլեկտրոնային նույնականացման միջոցները տրամադրող կողմի եւ իսկորոշման ընթացակարգն իրականացնող կողմի պատասխանատվությունը սույն կանոնակարգով նախատեսված համապատասխան պարտավորությունները չկատարելու համար: Այնուամենայնիվ, սույն կանոնակարգը պետք է կիրառվի պատասխանատվության մասին ազգային նորմերին համապատասխան: Հետեւաբար այն չի ազդում այդ ազգային

նորմերի վրա, որոնք, օրինակ, վերաբերում են վնասների սահմանմանը կամ համապատասխան կիրառելի ընթացակարգային նորմերին, այդ թվում՝ ապացուցման բեռին.

19) էլեկտրոնային նույնականացման համակարգերի անվտանգությունն առանցքային է էլեկտրոնային նույնականացման միջոցների վստահելի միջսահմանային փոխադարձ ճանաչման համար: Այս համատեքստում անդամ պետությունները պետք է համագործակցեն Միության մակարդակով էլեկտրոնային նույնականացման համակարգերի անվտանգության եւ փոխգործակցության ոլորտում: Յուրաքանչյուր դեպքում, երբ էլեկտրոնային նույնականացման համակարգերով պահանջվում է հատուկ սարքաշարի կամ ծրագրաշարի օգտագործում մասնավոր հատվածի վրա հիմնվող կողմերի կողմից ազգային մակարդակով, միջսահմանային փոխգործակցությամբ այդ անդամ պետություններին կոչ է արվում իրենց տարածքներից դուրս հիմնադրված՝ մասնավոր հատվածի վրա հիմնվող կողմերին չպարտադրել նման պահանջներ եւ հարակից ծախսեր: Այդ դեպքում համապատասխան լուծումները պետք է քննարկվեն եւ մշակվեն փոխգործակցության մեխանիզմի շրջանակներում: Այնուամենայնիվ, ազգային էլեկտրոնային նույնականացման միջոցներին հատուկ բնութագրերից բխող եւ այդպիսի էլեկտրոնային միջոցների (օրինակ՝ սմարթ քարտեր) կրիչների վրա հնարավոր ազդեցություն ունեցող տեխնիկական պահանջներն անխուսափելի են.

20) անդամ պետությունների համագործակցությունը պետք է հեշտացնի ծանուցված էլեկտրոնային նույնականացման համակարգերի տեխնիկական փոխգործակցությունը՝ ռիսկի աստիճանին համապատասխան՝ վստահության եւ անվտանգության բարձր մակարդակ խթանելու նպատակով: Անդամ պետությունների միջեւ տեղեկատվության եւ լավագույն փորձի փոխանակումը դրանց փոխադարձ ճանաչման նպատակով պետք է օգնեն այդպիսի համագործակցությանը.

21) սույն կանոնակարգով պետք է նաեւ սահմանվի տրաստային ծառայություններից օգտվելու ընդհանուր իրավական դաշտ: Այնուամենայնիվ, այն չպետք է ստեղծի դրանք օգտագործելու կամ առկա բոլոր տրաստային ծառայությունների համար մուտքի կետ տեղադրելու ընդհանուր պարտավորություն: Մասնավորապես այն չպետք է տարածվի սահմանված քանակով մասնակիցների միջեւ բացառապես փակ համակարգերում օգտագործվող ծառայությունների մատուցման վրա, որոնք որեւէ ազդեցություն չունեն երրորդ կողմի վրա: Օրինակ, տրաստային ծառայությունների օգտագործմամբ ներքին ընթացակարգերի կառավարման համար ձեռնարկություններում կամ պետական կառավարման ոլորտում ստեղծված համակարգերը չպետք է ենթակա լինեն սույն կանոնակարգով սահմանված պահանջներին: Միայն հանրությանը մատուցվող տրաստային ծառայությունները, որոնք ազդում են երրորդ կողմի վրա, պետք է համապատասխանեն սույն կանոնակարգով սահմանված պահանջներին: Սույն կանոնակարգը նաեւ չպետք է ընդգրկի պայմանագրերի կնքման եւ վավերականության կամ այլ իրավական պարտավորությունների հետ կապված ասպեկտներ, եթե առկա են ազգային կամ Միության իրավունքով սահմանված՝ ձեւին վերաբերող պահանջներ: Դրանից բացի, այն չպետք է ազդի պետական գրանցամատյաններին, մասնավորապես առեւտրային եւ կադաստրային գրանցամատյաններին առնչվող՝ ձեւին ներկայացվող ազգային պահանջների վրա.

22) դրանց ընդհանուր միջսահմանային օգտագործմանը նպաստելու համար պետք է հնարավորություն ստեղծվի տրաստային ծառայություններն օգտագործել բոլոր անդամ պետությունների դատավարությունում որպես ապացույց: Տրաստային ծառայությունների իրավական ազդեցությունը պետք է սահմանվի ազգային իրավունքով, եթե սույն կանոնակարգով այլ բան նախատեսված չէ.

23) այնքանով, որքանով սույն կանոնակարգով տրաստային ծառայությունը ճանաչելու պարտավորություն է ստեղծվում, այդպիսի տրաստային ծառայության մատուցումը կարող է մերժվել միայն այն դեպքում, երբ պարտավորության հասցեատերը չի կարողանում ընթերցել կամ ստուգել այն՝ հասցեատիրոջ անմիջական վերահսկողությունից դուրս գտնվող տեխնիկական պատճառներով: Այնուամենայնիվ, այդ պարտավորությամբ ինքնին պետական մարմնից չի կարող պահանջվել, որ վերջինս ձեռք բերի գոյություն ունեցող բոլոր տրաստային ծառայությունների տեխնիկական ընթերցման համար անհրաժեշտ սարքաշարը եւ ծրագրաշարը.

24) անդամ պետությունները կարող են Միության իրավունքին համապատասխան պահպանել կամ ներդնել ազգային օրենսդրական դրույթներ, որոնք վերաբերում են տրաստային ծառայություններին այնքանով, որքանով այդ ծառայությունները սույն կանոնակարգով լիովին ներդաշնակեցված չեն: Այնուամենայնիվ, սույն կանոնակարգին համապատասխանող տրաստային ծառայությունները պետք է ազատորեն շրջանառվեն ներքին շուկայում.

25) անդամ պետությունները պետք է ազատ լինեն սահմանելու տրաստային ծառայությունների այլ տեսակներ՝ ի լրումն սույն կանոնակարգով նախատեսված տրաստային ծառայությունների փակ ցանկի մաս կազմող ծառայությունների՝ դրանք ազգային մակարդակով որպես որակավորված տրաստային ծառայություններ ճանաչելու նպատակով.

26) տեխնոլոգիական փոփոխությունների սրընթաց տեմպի պատճառով սույն կանոնակարգով պետք է որդեգրվի նորարարության նկատմամբ ընկալունակ մոտեցում.

27) սույն կանոնակարգը պետք է տեխնոլոգիապես չեզոք լինի: Դրա գործողության արդյունքում առաջացած իրավական հետեւանքները պետք է կիրառելի լինեն ցանկացած տեխնիկական միջոցի համար՝ պայմանով, որ պահպանվեն սույն կանոնակարգի պահանջները.

28) մասնավորապես փոքր եւ միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) եւ սպառողների վստահությունը ներքին շուկայի նկատմամբ բարելավելու եւ տրաստային ծառայությունների եւ արտադրանքի օգտագործումը խթանելու համար «որակավորված տրաստային ծառայություն» եւ «որակավորված տրաստային ծառայություն մատուցողներ» հասկացությունները պետք է ներմուծվեն ցանկացած օգտագործվող կամ տրամադրված որակավորված տրաստային ծառայությունների եւ արտադրանքի բարձր մակարդակի անվտանգություն ապահովելու համար ներկայացվող պահանջները եւ պարտավորությունները մատնանշելու նպատակով.

29) խորհրդի թիվ 2010/48/ԵՀ որոշմամբ ([1]) հաստատված՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայով, մասնավորապես՝ Կոնվենցիայի 9-րդ հոդվածով ստանձնած պարտավորություններին համահունչ, հաշմանդամություն ունեցող անձինք այլ սպառողների հետ հավասար հիմունքներով պետք է կարողանան օգտվել տրաստային ծառայություններից եւ այդ ծառայությունների մատուցման համար օգտագործվող՝ վերջնական սպառողի համար նախատեսված արտադրանքից: Հետեւաբար, եթե իրագործելի է, մատուցված տրաստային ծառայությունները եւ այդ ծառայությունների մատուցման համար օգտագործվող՝ վերջնական սպառողի համար նախատեսված արտադրանքը պետք է հասանելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց: Իրագործելիության գնահատումը պետք է ներառի, ի թիվս այլնի, տեխնիկական եւ տնտեսական դիտարկումներ.

30) անդամ պետությունները պետք է նշանակեն վերահսկողություն իրականացնող մարմին կամ վերահսկողություն իրականացնող մարմիններ՝

[1] «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի մասով Եվրոպական համայնքի կողմից ներկայացված եզրակացության վերաբերյալ Խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 2010/48/ԵՀ որոշում (ՊՏ L 23, 2010 թվականի հունվարի 27, էջ 35):

սույն կանոնակարգով նախատեսված վերահսկողական գործունեությունն իրականացնելու համար: Անդամ պետությունները պետք է նաեւ հնարավորություն ունենան այլ անդամ պետության հետ փոխադարձ համաձայնությամբ այդ այլ անդամ պետության տարածքում նշանակել վերահսկողություն իրականացնող մարմին.

31) վերահսկողություն իրականացնող մարմինները պետք է համագործակցեն տվյալների պաշտպանությամբ զբաղվող մարմինների հետ, օրինակ՝ անձնական տվյալների պաշտպանության կանոնների խախտում հայտնաբերելու դեպքում նրանց տեղեկացնելով որակավորված տրաստային ծառայություն մատուցողների մոտ անցկացված աուդիտների արդյունքների մասին: Տրամադրվող տեղեկատվությունը պետք է մասնավորապես ներառի անվտանգության հետ կապված միջադեպեր եւ անձնական տվյալների խախտումներ.

32) բոլոր տրաստային ծառայություն մատուցողները պարտավոր են կիրառել անվտանգության ապահովման պատշաճ գործելակերպ՝ իրենց գործունեությանն առնչվող ռիսկերին համապատասխան, միասնական շուկայի նկատմամբ սպառողների վստահությունը խթանելու համար.

33) հավաստագրերում կեղծանունների օգտագործման մասին դրույթներն անդամ պետություններին չպետք է խանգարեն Միության կամ ազգային իրավունքին համապատասխան անձանց նույնականացման պահանջ ներկայացնելուն,

34) բոլոր անդամ պետությունները պետք է հետեւեն վերահսկողության համընդհանուր, հիմնական պահանջների՝ որակավորված տրաստային ծառայությունների անվտանգության համադրելի մակարդակ ապահովելու համար: Միության տարածքում այդ պահանջների հետեւողական կիրառումը հեշտացնելու համար անդամ պետությունները պետք է որդեգրեն համադրելի ընթացակարգեր եւ պետք է տեղեկություններ փոխանակեն

քննարկվող ոլորտում իրենց վերահսկիչ միջոցառումների եւ լավագույն փորձի մասին.

35) սույն կանոնակարգի պահանջները, մասնավորապես՝ գործառնությունների եւ ծառայությունների անվտանգության եւ բարեխիղճ կատարման, թափանցիկության եւ հաշվետվողականության ապահովման պարտավորության վերաբերյալ պահանջները պետք է տարածվեն բոլոր տրաստային ծառայություն մատուցողների վրա: Այնուամենայնիվ, ելնելով տրաստային ծառայություն մատուցողների կողմից մատուցված ծառայությունների տեսակից՝ այդ պահանջների մասով նպատակահարմար է տարբերակել որակավորված եւ չորակավորված տրաստային ծառայություն մատուցողներին.

36) բոլոր տրաստային ծառայություն մատուցողների համար վերահսկողության ռեժիմ սահմանելը պետք է հավասար պայմաններ ապահովի նրանց գործառնությունների եւ ծառայությունների անվտանգության եւ հաշվետվողականության համար՝ այդպիսով նպաստելով սպառողների պաշտպանությանը եւ ներքին շուկայի գործունեությանը: Որակավորում չունեցող տրաստային ծառայություն մատուցողների նկատմամբ պետք է կիրառվեն մեղմ եւ ռեակտիվ, փաստացի վերահսկիչ միջոցառումներ, որոնք հիմնավորված են նրանց կողմից մատուցված ծառայությունների եւ գործառնությունների բնույթով: Վերահսկողություն իրականացնող մարմնի համար, հետեւաբար, սահմանված չէ չորակավորված ծառայություն մատուցողներին վերահսկելու ընդհանուր պարտավորություն: Վերահսկողություն իրականացնող մարմինը պետք է քայլեր ձեռնարկի միայն այն դեպքում, երբ տեղեկացվում է (օրինակ՝ չորակավորված տրաստային ծառայություն մատուցողի կողմից անձամբ կամ վերահսկողություն իրականացնող այլ մարմնի կողմից, օգտագործողից կամ բիզնես գործընկերոջից ստացված ծանուցմամբ կամ սեփական քննության հիման վրա), որ չորակավորված հավատարմագրային ծառայություն մատուցողը չի կատարում սույն կանոնակարգի պահանջները.

37) սույն կանոնակարգը պետք է պատասխանատվություն նախատեսի բոլոր տրաստային ծառայություն մատուցողների համար: Մասնավորապես դրանով պետք է հաստատվի պատասխանատվության ռեժիմ, որով բոլոր տրաստային ծառայություն մատուցողները պետք է պատասխանատվություն կրեն սույն կանոնակարգով ստանձնած պարտավորությունները չկատարելու արդյունքում ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձի պատճառած վնասի համար: Այն ֆինանսական ռիսկի գնահատումը հեշտացնելու համար, որը տրաստային ծառայություն մատուցողները, հնարավոր է՝ ստիպված կլինեն կրել, կամ որը նրանք պետք է ծածկեն ապահովագրերով, սույն կանոնակարգով տրաստային ծառայություն մատուցողներին հնարավորություն է տրվում որոշակի պայմաններում սահմանափակումներ սահմանել իրենց կողմից մատուցվող ծառայությունների օգտագործման մասով եւ պատասխանատվություն չկրել այդպիսի սահմանափակումները գերազանցող ծառայություններից օգտվելու արդյունքում առաջացած վնասների համար: Հաճախորդները պետք է նախօրոք պատշաճ կերպով տեղեկացվեն սահմանափակումների մասին: Այդ սահմանափակումները պետք է ճանաչելի լինեն երրորդ կողմի կողմից, օրինակ՝ մատուցված ծառայության ժամկետների ու պայմանների մեջ այդ սահմանափակումների վերաբերյալ տեղեկություններ ներառելու միջոցով կամ այլ ճանաչելի միջոցներով: Այդ սկզբունքներն իրագործելու նպատակով սույն կանոնակարգը պետք է կիրառվի պատասխանատվության ենթարկելու մասին ազգային նորմերին համապատասխան: Հետեւաբար սույն կանոնակարգը չի շոշափում այն ազգային նորմերը, որոնք, օրինակ, վերաբերում են վնասի, դիտավորության, անզգուշության սահմանմանը կամ համապատասխան կիրառելի ընթացակարգային կանոններին.

38) կարեւոր է անվտանգության խախտումների եւ անվտանգության ռիսկի գնահատումների մասին ծանուցելը՝ անվտանգության խախտման կամ ամբողջականության կորստի դեպքում շահագրգիռ կողմերին համապատասխան տեղեկատվություն տրամադրելու նպատակով.

39) Հանձնաժողովին եւ անդամ պետություններին սույն կանոնակարգով ներկայացված՝ խախտումների մասին ծանուցման մեխանիզմի արդյունավետությունը գնահատելու համար անհրաժեշտ է պահանջել, որ վերահսկողություն իրականացնող մարմինները ամփոփ տեղեկություններ ներկայացնեն Հանձնաժողովին եւ Եվրոպական միության ցանցային եւ տեղեկատվական անվտանգության ապահովման գործակալությանը (ԵՑՏԱԳ).

40) Հանձնաժողովին եւ անդամ պետություններին սույն կանոնակարգով ներկայացված ընդլայնված վերահսկողության մեխանիզմի արդյունավետությունը գնահատելու համար վերահսկողություն իրականացնող մարմիններից կպահանջվի զեկուցել իրենց գործունեության մասին: Սա կարեւոր նշանակություն կունենա վերահսկողություն իրականացնող մարմինների միջեւ լավագույն փորձի փոխանակումը հեշտացնելու համար եւ կապահովի բոլոր անդամ պետություններում վերահսկողությանը ներկայացվող հիմնական պահանջների հետեւողական եւ արդյունավետ կատարման ստուգումը.

41) որակավորված տրաստային ծառայությունների կայունությունը եւ շարունակականությունն ապահովելու եւ որակավորված տրաստային ծառայությունների մշտական բնույթի նկատմամբ օգտագործողի վստահությունը խթանելու նպատակով վերահսկողություն իրականացնող մարմինները պետք է ստուգեն դադարեցման ծրագրերի մասին դրույթների առկայությունը եւ ճիշտ կիրառությունը՝ որակավորված տրաստային ծառայություն մատուցողների կողմից իրենց գործունեությունը դադարեցնելու դեպքում.

42) որակավորված տրաստային ծառայություն մատուցողների նկատմամբ վերահսկողությունը հեշտացնելու համար, օրինակ, այն դեպքում, երբ մատուցողը իր ծառայությունները մատուցում է այլ անդամ պետության տարածքում եւ այնտեղ վերահսկողության ենթակա չէ, կամ երբ

ծառայություն մատուցողի համակարգիչները չեն գտնվում այն անդամ պետության տարածքում, որտեղ այն հիմնադրվել է, անդամ պետություններում վերահսկողություն իրականացնող մարմինների միջեւ պետք է ստեղծվի փոխադարձ աջակցության համակարգ.

43) որակավորված տրաստային ծառայություն մատուցողների եւ նրանց կողմից մատուցված ծառայությունների համապատասխանությունը սույն կանոնակարգով սահմանված պահանջներին ապահովելու նպատակով համապատասխանության գնահատման մարմնի կողմից պետք է անցկացվի համապատասխանության գնահատում, եւ համապատասխանության գնահատման արդյունքների մասին հաշվետվությունները պետք է որակավորված տրաստային ծառայություն մատուցողների կողմից ներկայացվեն վերահսկողություն իրականացնող մարմին: Երբ վերահսկողություն իրականացնող մարմինը որակավորված տրաստային ծառայություն մատուցողից պահանջում է ներկայացնել համապատասխանության գնահատման հաշվետվություն կոնկրետ դեպքի համար, վերահսկողություն իրականացնող մարմինը պետք է պահպանի մասնավորապես պատշաճ կառավարման սկզբունքները, այդ թվում՝ իր որոշումների համար հիմնավորումներ ներկայացնելու պարտավորությունը, ինչպես նաեւ համաչափության սկզբունքը: Հետեւաբար վերահսկողություն իրականացնող մարմինը պետք է պատշաճ կերպով հիմնավորի կոնկրետ դեպքի համար համապատասխանության գնահատում պահանջելու իր որոշումը.

44) սույն կանոնակարգի նպատակն է փոխկապակցված համակարգի ստեղծումը տրաստային ծառայությունների անվտանգության բարձր մակարդակ եւ իրավական որոշակիություն ապահովելու հեռանկարով: Այս առումով, արտադրանքի եւ ծառայությունների համապատասխանությունը գնահատելիս Հանձնաժողովը պետք է անհրաժեշտության դեպքում ձգտի իր գործողությունները համաձայնեցնել համապատասխան առկա եվրոպական

եւ միջազգային այնպիսի գործիքների հետ, ինչպիսիք են, օրինակ՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի([1])թիվ 765/2008 (ԵՀ) կանոնակարգը, որով պահանջներ են սահմանվում համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման եւ շուկայում արտադրանքի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար.

45) գործընթացի արդյունավետ մեկնարկը հնարավոր դարձնելու համար, որի արդյունքում որակավորված տրաստային ծառայություն մատուցողները եւ նրանց կողմից մատուցված որակավորված տրաստային ծառայությունները պետք է ներառվեն տրաստային ցանկերում, պետք է խրախուսվեն հավանական որակավորված տրաստային ծառայություն մատուցողների եւ իրավասու վերահսկողություն իրականացնող մարմնի միջեւ նախնական փոխգործակցությունը որակավորված տրաստային ծառայությունների ապահովմանը հանգեցնող համալիր ստուգման իրականացումը հեշտացնելու նպատակով.

46) տրաստային ցանկերը կարեւոր տարրեր են շուկայի տնտեսավարողների միջեւ վստահության ձեւավորման համար, քանի որ դրանք ցույց են տալիս ծառայություն մատուցողի որակավորման կարգավիճակը վերահսկողության իրականացման պահին.

47) առցանց ծառայությունների նկատմամբ վստահությունը եւ դրանց հարմարավետությունը կարեւոր են օգտագործողների կողմից էլեկտրոնային ծառայություններից լիարժեք օգտվելու եւ դրանց վրա գիտակցաբար հիմնվելու տեսանկյունից: Այս նպատակով պետք է ստեղծվի ԵՄ տրաստային նշան՝ որակավորված տրաստային ծառայություն մատուցողների կողմից մատուցված որակավորված տրաստային

[1] Արտադրանքի շուկայահանման մասով հավատարմագրմանը ու շուկայի նկատմամբ վերահսկողության իրականացմանը ներկայացվող պահանջներ սահմանող եւ թիվ 339/93 (ԵՏՀ) կանոնակարգը ուժը կորցրած ճանաչող՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2008 թվականի հուլիսի 9-ի թիվ 765/2008 կանոնակարգ (ԵՀ) (ՊՏ L 218, 2008 թվականի օգոստոսի 13, էջ 30):

ծառայությունները նույնականացնելու համար: Որակավորված տրաստային ծառայությունների համար ԵՄ-ի այդպիսի տրաստային նշանով պետք է հստակ տարբերակվեն որակավորված տրաստային ծառայությունները մյուս տրաստային ծառայություններից՝ այդպիսով նպաստելով շուկայում թափանցիկության ապահովմանը: ԵՄ-ի տրաստային նշանի օգտագործումը որակավորված տրաստային ծառայություն մատուցողների կողմից պետք է լինի կամավոր եւ բացի սույն կանոնակարգով նախատեսվածից՝ չպետք է ենթադրի որեւէ այլ պահանջի սահմանում.

48) թեեւ էլեկտրոնային ստորագրությունների փոխադարձ ճանաչումն ապահովելու համար անհրաժեշտ է անվտանգության բարձր մակարդակ, այնուամենայնիվ, որոշ դեպքերում, օրինակ՝ Հանձնաժողովի թիվ 2009/767/ԵՀ որոշման ([1]) համատեքստում պետք է ընդունվեն նաեւ անվտանգության նկատմամբ վստահության ապահովման ավելի ցածր մակարդակով էլեկտրոնային ստորագրություններ.

49) սույն կանոնակարգով պետք է սահմանվի այն սկզբունքը, համաձայն որի էլեկտրոնային ստորագրությունը չի կարող զրկվել իրավաբանական ուժից այն հիմքով, որ այն կազմված է էլեկտրոնային ձեւով կամ չի բավարարում որակավորված էլեկտրոնային ստորագրությանը ներկայացվող պահանջները: Այնուամենայնիվ, էլեկտրոնային ստորագրությունների իրավաբանական ուժը որոշվում է ազգային օրենսդրությամբ՝ բացառությամբ սույն կանոնակարգով նախատեսված պահանջների, համաձայն որոնց որակավորված էլեկտրոնային ստորագրությունը պետք է ունենա ձեռագիր ստորագրությանը համարժեք իրավական ուժ.

[1] [1] Հանձնաժողովի 2009 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 2009/767/ԵՀ որոշում, որը սահմանում է «միասնական կոնտակտային կետերի» օգնությամբ էլեկտրոնային միջոցներով ընթացակարգերի կիրառությունը դյուրացնող միջոցները՝ ըստ «Ներքին շուկայում ծառայությունների մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 2006/123/ԵՀ հրահանգի (ՊՏ L 274, 2009 թվականի հոկտեմբերի 20, էջ 36):

50) քանի որ անդամ պետությունների իրավասու մարմինները ներկայումս իրենց փաստաթղթերը էլեկտրոնային եղանակով ստորագրելու համար օգտագործում են ժամանակակից էլեկտրոնային ստորագրությունների տարբեր ձեաչափեր, անհրաժեշտ է ապահովել, որ անդամ պետությունները կարողանան տեխնիկապես սպասարկել ժամանակակից էլեկտրոնային ստորագրության ձեաչափերի առնվազն մի մասը՝ էլեկտրոնային եղանակով ստորագրված փաստաթղթեր ստանալիս: Նմանապես, երբ իրավասու մարմիններն անդամ պետություններում օգտագործում են ժամանակակից էլեկտրոնային կնիքներ, անհրաժեշտ կլինի ապահովել, որ նրանք տեխնիկապես սպասարկեն ժամանակակից էլեկտրոնային կնիքների ձեաչափերի առնվազն մի մասը.

51) ստորագրող անձի համար պետք է նախատեսվի որակավորված էլեկտրոնային ստորագրություն ստեղծելու հարմարանքը երրորդ կողմին հանձնելու հնարավորություն՝ պայմանով, որ կիրառվեն համապատասխան մեխանիզմներ եւ ընթացակարգեր՝ ստորագրող անձի կողմից իր էլեկտրոնային ստորագրության ստեղծման տվյալների օգտագործման նկատմամբ միանձնյա հսկողություն ապահովելու համար, եւ որ հարմարանքի օգտագործմամբ բավարարվեն որակավորված էլեկտրոնային ստորագրությանը ներկայացվող պահանջները.

52) նախատեսվում է ավելացնել հեռակա կարգով էլեկտրոնային ստորագրությունների ստեղծումը, երբ էլեկտրոնային ստորագրությունը ստեղծելու միջավայրը կառավարվում է տրաստային ծառայություն մատուցողի կողմից ստորագրող անձի անունից՝ հաշվի առնելով դրա բազմաթիվ տնտեսական օգուտները: Այնուամենայնիվ, այդպիսի էլեկտրոնային ստորագրությունների՝ նույնպիսի իրավական ճանաչում ստանալն ապահովելու համար, որպիսին ունեն բացառապես օգտագործողի կողմից կառավարվող միջավայրում ստեղծված էլեկտրոնային ստորագրությունները, հեռակա կարգով էլեկտրոնային ստորագրության

ծառայություն մատուցողները պետք է կիրառեն կառավարման եւ վարչական անվտանգության հատուկ ընթացակարգեր եւ օգտագործեն վստահելի համակարգեր եւ արտադրանք, այդ թվում՝ էլեկտրոնային հաղորդակցության անվտանգ ուղիներ՝ երաշխավորելու համար էլեկտրոնային ստորագրության ստեղծման միջավայրի հուսալիությունն ու դրա օգտագործումը բացառապես ստորագրող անձի հսկողության ներքո: Եթե որակավորված էլեկտրոնային ստորագրությունը ստեղծվել է հեռակա էլեկտրոնային ստորագրության ստեղծման հարմարանքի օգտագործմամբ, ապա պետք է կիրառվեն որակավորված տրաստային ծառայություն մատուցողների նկատմամբ սույն կանոնակարգով սահմանված պահանջները.

53) մի շարք անդամ պետություններում որակավորման հավաստագրերի գործողության կասեցումը տրաստային ծառայություն մատուցողների կողմից ընդունված աշխատանքային գործելակերպ է, որը տարբերվում է չեղարկումից եւ հանգեցնում է հավաստագրի վավերականության ժամանակավոր կորստի: Իրավական որոշակիության նկատառումներով անհրաժեշտ է մշտապես հստակ կերպով նշել հավաստագրի՝ կասեցված լինելու կարգավիճակը: Այդ նպատակով տրաստային ծառայություն մատուցողները պետք է կրեն հավաստագրի կարգավիճակը, իսկ կասեցման դեպքում՝ հավաստագրի կասեցման ճշգրիտ ժամանակը հստակ նշելու պարտավորություն: Սույն կանոնակարգով տրաստային ծառայություն մատուցողներին կամ անդամ պետություններին չպետք է պարտադրվի կասեցման գործընթացի կիրառումը, սակայն դրանում պետք է նախատեսվեն թափանցիկության վերաբերյալ կանոններ այն ժամանակ եւ այն վայրում, որտեղ նման գործելակերպն առկա է.

54) որակավորման հավաստագրերի միջսահմանային փոխգործակցությունը եւ ճանաչումը որակավորված էլեկտրոնային ստորագրությունների միջսահմանային ճանաչման նախադրյալներից է: Հետեւաբար, բացի սույն կանոնակարգով սահմանված պահանջներից՝ որակավորման

հավաստագրերին չպետք է ներկայացվեն այլ հավելյալ պարտադիր պահանջներ: Այնուամենայնիվ, ազգային մակարդակով պետք է թույլատրվի որակավորման հավաստագրերում հատուկ տարրերի, այդ թվում՝ եզակի նույնականացուցիչների ներառում՝ պայմանով, որ այդ հատուկ տարրերը չեն խոչընդոտի միջսահմանային փոխգործակցությունը եւ որակավորման հավաստագրերի եւ էլեկտրոնային ստորագրությունների ճանաչումը.

55) այնպիսի միջազգային ստանդարտների վրա հիմնված ՏՏ անվտանգության հավաստագրումը, ինչպիսին է ԻՍՕ 15408-ը, ինչպես նաեւ հարակից գնահատման մեթոդներն եւ փոխադարձ ճանաչման պայմանավորվածությունները, կարեւոր գործիք են որակավորված էլեկտրոնային ստորագրության ստեղծման հարմարանքների անվտանգությունը ստուգելու համար, ուստի դրանք պետք է խթանել: Այնուամենայնիվ, այնպիսի նորարարական լուծումներ եւ ծառայություններ, ինչպիսիք են բջջային հեռախոսից ստորագրումը եւ ամպային ստորագրումը, հիմնված են որակավորված էլեկտրոնային ստորագրության ստեղծման այն հարմարանքների համար տեխնիկական եւ կազմակերպական լուծումների վրա, որոնց համար անվտանգության ստանդարտները կարող են դեռեւս հասանելի չլինել, կամ որոնց համար ընթացքի մեջ է ՏՏ անվտանգության հավաստագրման առաջին գործընթացը: Այդպիսի որակավորված էլեկտրոնային ստորագրության ստեղծման հարմարանքների անվտանգության մակարդակը կարող է գնահատվել այլընտրանքային գործընթացներ կիրառելու միջոցով միայն այն դեպքերում, երբ անվտանգության ստանդարտները հասանելի չեն, կամ երբ ընթացքի մեջ է ՏՏ անվտանգության հավաստագրման առաջին գործընթացը: Այդ գործընթացները պետք է համադրելի լինեն ՏՏ անվտանգության հավաստագրման ստանդարտներին այնքանով, որքանով դրանց անվտանգության մակարդակները համարժեք են: Այդ գործընթացները կարող են դյուրացվել փոխադարձ գնահատման միջոցով.

56) սույն կանոնակարգով պետք է պահանջներ սահմանվեն որակավորված էլեկտրոնային ստորագրության ստեղծման հարմարանքների նկատմամբ՝ ժամանակակից էլեկտրոնային ստորագրությունների ֆունկցիոնալությունն ապահովելու համար: Սույն կանոնակարգի գործողությունը չպետք է տարածվի այն ամբողջ համակարգային միջավայրի վրա, որում այդ հարմարանքներն աշխատում են: Հետեւաբար որակավորված ստորագրության ստեղծման հարմարանքների հավաստագրման շրջանակը պետք է սահմանափակվի այն սարքաշարով եւ համակարգային ծրագրաշարով, որոնք կիրառվում են ստորագրության ստեղծման հարմարանքում ստեղծված, պահվող կամ մշակվող ստորագրության ստեղծման տվյալները կառավարելու եւ պաշտպանելու համար: Ինչպես մանրամասն ներկայացված է համապատասխան ստանդարտներում, հավաստագրման պարտավորության շրջանակից պետք է բացառվեն ստորագրության ստեղծման հավելվածները.

57) ստորագրության վավերականության մասով իրավական որոշակիություն ապահովելու համար անհրաժեշտ է նշել որակավորված էլեկտրոնային ստորագրության բաղադրիչները, որոնք պետք է գնահատի վավերականության ստուգում իրականացնող կողմը: Ավելին, այն որակավորված տրաստային ծառայություն մատուցողների համար պահանջների սահմանումը, որոնք կարող են որակավորման վավերականության ստուգման ծառայություն մատուցել մասնավոր հատվածի վրա հիմնվող այն կողմերին, որոնք անկարող են կամ չեն ցանկանում ինքնուրույն իրականացնել որակավորված էլեկտրոնային ստորագրությունների վավերականության ստուգումը, պետք է մասնավոր եւ պետական հատվածի համար նմանատիպ ծառայություններում ներդրում կատարելու խթան հանդիսանա: Երկու տարրերն էլ պետք է հեշտ եւ հարմարավետ դարձնեն որակավորված էլեկտրոնային ստորագրության վավերականության ստուգումը Միության մակարդակով բոլոր կողմերի համար.

58) երբ գործարքի կատարման համար իրավաբանական անձից պահանջվում է որակավորված էլեկտրոնային կնիքի առկայություն, իրավաբանական անձի լիազոր ներկայացուցչի որակավորված էլեկտրոնային ստորագրությունը պետք է հավասարապես ընդունելի լինի.

59) էլեկտրոնային կնիքները պետք է ծառայեն որպես ապացույց այն մասին, որ էլեկտրոնային փաստաթուղթը տրվել է իրավաբանական անձի կողմից՝ ապահովելով փաստաթղթի ծագման եւ ամբողջականության մասով որոշակիությունը.

60) էլեկտրոնային կնիքների համար որակավորման հավաստագրեր տրամադրող՝ տրաստային ծառայություն մատուցողները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ, որպեսզի կարողանան պարզել իրավաբանական անձը ներկայացնող այն ֆիզիկական անձի ինքնությունը, որին տրվում է էլեկտրոնային կնիքի որակավորման հավաստագիրը, երբ այդ նույնականացումն անհրաժեշտ է ազգային մակարդակում դատական կամ վարչական վարույթների համատեքստում.

61) սույն կանոնակարգով պետք է ապահովվի տեղեկատվության երկարաժամկետ պահպանումը՝ էլեկտրոնային ստորագրությունների եւ էլեկտրոնային կնիքների իրավական վավերականությունը երկարատեւ ժամանակահատվածում ապահովելու եւ անկախ հետագա տեխնոլոգիական փոփոխություններից դրանց վավերականության ստուգման հնարավորությունը երաշխավորելու համար.

62) որակավորված էլեկտրոնային ժամանակային դրոշմակնիքների անվտանգությունն ապահովելու նպատակով սույն կանոնակարգով կպահանջվի ժամանակակից էլեկտրոնային կնիքների կամ ժամանակակից էլեկտրոնային ստորագրության կամ այլ համարժեք մեթոդների կիրառում: Կարելի է կանխատեսել, որ նորարարությունը կարող է հանգեցնել նոր տեխնոլոգիաների ստեղծման, որոնք ժամանակային դրոշմակնիքների

համար կարող են ապահովել անվտանգության համարժեք մակարդակ: Ամեն անգամ, երբ օգտագործվում է ժամանակակից էլեկտրոնային կնիքից կամ ժամանակակից էլեկտրոնային ստորագրությունից տարբեր այլ մեթոդ, որակավորված տրաստային ծառայություն մատուցողը պետք է գնահատման հաշվետվությանը համապատասխան հիմնավորի, որ այդպիսի մեթոդն ապահովում է անվտանգության համարժեք մակարդակ եւ իրականացվում է սույն կանոնակարգով սահմանված պարտավորություններին համապատասխան.

63) էլեկտրոնային փաստաթղթերը կարեւոր են ներքին շուկայում միջսահմանային էլեկտրոնային գործարքների հետագա զարգացման համար: Սույն կանոնակարգով պետք է սահմանվի սկզբունք, համաձայն որի էլեկտրոնային փաստաթուղթը չպետք է զրկվի իրավական ուժից այն հիմքով, որ այն կազմված է էլեկտրոնային ձեւով, որպեսզի երաշխավորվի, որ էլեկտրոնային գործարքը չի մերժվի միայն այն հիմքով, որ փաստաթուղթը ներկայացված է էլեկտրոնային ձեւով.

64) ժամանակակից էլեկտրոնային ստորագրությունների եւ կնիքների ձեւաչափերին անդրադառնալիս Հանձնաժողովը պետք է հիմնվի գոյություն ունեցող գործելակերպերի, ստանդարտների եւ օրենսդրության, մասնավորապես՝ Հանձնաժողովի թիվ 2011/130/ԵՄ [1] որոշման վրա.

65) ի լրումն իրավաբանական անձի կողմից փաստաթղթի իսկորոշման՝ էլեկտրոնային կնիքները կարող են օգտագործվել իրավաբանական անձի ցանկացած թվային ակտիվ, օրինակ՝ ծրագրաշարի ծածկագրեր կամ սպասարկիչներ, իսկորոշելու համար.

[1] Հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 25-ի թիվ 2011/130/ԵՄ որոշում, որով սահմանվում են իրավասու մարմինների կողմից էլեկտրոնային եղանակով ստորագրված փաստաթղթերի միջսահմանային մշակման նվազագույն պահանջները՝ համաձայն «Ներքին շուկայում ծառայությունների մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 2006/123/ԵՀ հրահանգի (ՊՏ L 53, 26.02.2011թ., էջ 66):

66) կարեւոր է ապահովել իրավական դաշտ էլեկտրոնային եղանակով գրանցված առաքման ծառայությունների ոլորտում գոյություն ունեցող ազգային իրավական համակարգերի միջեւ միջսահմանային ճանաչումը դյուրացնելու համար: Այդ դաշտը կարող է նաեւ նոր շուկայական հնարավորություններ ստեղծել Միության տրաստային ծառայություն մատուցողների համար նոր համաեվրոպական, էլեկտրոնային եղանակով գրանցված առաքման ծառայություններ առաջարկելու նպատակով.

67) կայքի իսկորոշման ծառայություններով տրամադրվում են միջոցներ, որոնցով կայքի այցելուն կարող է համոզվել, որ կայքի հետեւում կանգնած է իսկական եւ օրինական կազմակերպություն: Այդ ծառայությունները նպաստում են առցանց գործարարությամբ զբաղվելու նկատմամբ հավատի եւ վստահության ձեւավորմանը, քանի որ օգտագործողները վստահություն են ձեռք բերում իսկորոշված կայքի հանդեպ: Կայքի իսկորոշման ծառայությունների տրամադրումն ու օգտագործումը լիովին կամավոր են: Այնուամենայնիվ, որպեսզի կայքի իսկորոշումը դառնա վստահությունը խթանող միջոց, որը կապահովի առավել լավ փորձառություն օգտագործողի համար եւ կնպաստի ներքին շուկայում հետագա աճին, սույն կանոնակարգով պետք է սահմանվեն անվտանգության եւ պատասխանատվության նվազագույն պարտավորություններ՝ ծառայություն մատուցողների եւ նրանց կողմից մատուցված ծառայությունների համար: Այդ նպատակով հաշվի են առնվել գոյություն ունեցող առաջատար նախաձեռնությունները, օրինակ՝ Հավաստագրման կենտրոնների/դիտարկիչների ֆորումը՝ ՀԿ/Դ ֆորում: Ի լրումն, սույն կանոնակարգը չպետք է խոչընդոտի սույն կանոնակարգով չկարգավորվող կայքի իսկորոշման այլ միջոցների կամ մեթոդների օգտագործումը, այն չպետք է նաեւ խանգարի երրորդ երկրի՝ կայքի իսկորոշման ծառայություններ մատուցողների կողմից Միության տարածքում իրենց ծառայությունների մատուցմանը: Այնուամենայնիվ, երրորդ երկրի ծառայություն մատուցողն իր

կայքի իսկորոշման ծառայությունները պետք է ճանաչի որպես սույն կանոնակարգին համապատասխան որակավորված միայն այն դեպքում, երբ Միության եւ ծառայություն մատուցողի հիմնադրման երկրի միջեւ կնքվել է միջազգային համաձայնագիր.

68) «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրի (ԵՄԳՊ)՝ հիմնադրման վերաբերյալ դրույթների համաձայն «իրավաբանական անձինք» հասկացությունը թույլ է տալիս տնտեսավարող սուբյեկտներին ընտրել կազմակերպաիրավական այն ձեւը, որը հարմար է իրենց գործունեությունն իրականացնելու համար: Համապատասխանաբար, ԵՄԳՊ-ի իմաստով «իրավաբանական անձինք» բոլոր այն սուբյեկտներն են, որոնք, անկախ իրենց կազմակերպաիրավական ձեւից, ստեղծվել են կամ կառավարվում են անդամ պետության իրավունքով.

69) խրախուսվում է, որ Միության կառույցները, մարմինները, գրասենյակներն ու գործակալությունները ճանաչեն սույն կանոնակարգով կարգավորվող էլեկտրոնային նույնականացման եւ տրաստային ծառայությունները վարչական համագործակցության նպատակով՝ օգտվելով մասնավորապես սույն կանոնակարգի կարգավորման ոլորտներում գոյություն ունեցող պատշաճ գործելակերպերից եւ ընթացիկ ծրագրերի արդյունքներից.

70) սույն կանոնակարգի որոշակի մանրամասն տեխնիկական ասպեկտներ ճկուն եւ արագ լրացնելու համար, որակավորված էլեկտրոնային ստորագրության ստեղծման հարմարանքների հավաստագրման համար պատասխանատու մարմինների կողմից պահպանման ենթակա չափորոշիչների մասով ԵՄԳՊ-ի 290-րդ հոդվածին համապատասխան ակտեր ընդունելու իրավասությունը պետք է վերապահվի Հանձնաժողովին: Հատկապես կարեւոր է, որ Հանձնաժողովն իր կողմից անցկացվող նախապատրաստական աշխատանքների ընթացքում անցկացնի համապատասխան խորհրդակցություններ, այդ թվում՝ փորձագիտական մակարդակով: Պատվիրակված ակտերը նախապատրաստելիս եւ մշակելիս

Հանձնաժողովը պետք է ապահովի համապատասխան փաստաթղթերի համաժամանակյա, ժամանակին եւ տեղին փոխանցումը Եվրոպական պառլամենտին եւ Խորհրդին.

71) սույն կանոնակարգի կիրարկման համար միասնական պայմաններ ապահովելու նպատակով Հանձնաժողովին պետք է վերապահվեն կիրարկման լիազորություններ, մասնավորապես այն ստանդարտների հերթական համարները նշելու համար, որոնց օգտագործումը կառաջացնի սույն կանոնակարգում շարադրված որոշակի պահանջներին համապատասխանության կանխավարկած: Այդ լիազորությունները պետք է իրականացվեն Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 182/2011 կանոնակարգին (ԵՄ) համապատասխան (1).

72) պատվիրակված կամ կիրարկող ակտեր ընդունելիս Հանձնաժողովը պետք է պատշաճ կերպով հաշվի առնի եվրոպական եւ միջազգային ստանդարտացման կազմակերպությունների եւ մարմինների, մասնավորապես՝ Ստանդարտացման եվրոպական կոմիտեի (ՍԵԿ), Հեռահաղորդակցման ստանդարտների եվրոպական ինստիտուտի (ՀՍԵԻ), Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ԻՍՕ) եւ Հեռահաղորդակցության միջազգային միության (ՀՄՄ) կողմից կազմված ստանդարտներն ու տեխնիկական մասնագրերը՝ էլեկտրոնային նույնականացման եւ տրաստային ծառայությունների անվտանգության բարձր մակարդակ եւ փոխգործակցություն ապահովելու նպատակով.

73) իրավական որոշակիության եւ հստակության նկատառումներով թիվ 1999/93/ԵՀ հրահանգը պետք է ուժը կորցրած ճանաչվի.

[1] Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2011 թվականի փետրվարի 16-ի թիվ 182/2011 կանոնակարգը (ԵՀ), որը սահմանում է այն կանոններն ու ընդհանուր սկզբունքները, որոնք վերաբերում են Հանձնաժողովի կողմից կիրարկման լիազորություններն իրականացնելու նկատմամբ անդամ պետությունների կողմից հսկողություն իրականացնելու մեխանիզմներին (ՊՏ L 55, 28.02.2011թ., էջ 13):

74) շուկայի այն տնտեսավարողների համար իրավական որոշակիություն ապահովելու նպատակով, որոնք արդեն իսկ օգտագործում են այնպիսի որակավորման հավաստագրեր, որպիսիք տրամադրվել են ֆիզիկական անձանց թիվ 1999/93/ԵՀ հրահանգին համապատասխան, անհրաժեշտ է նախատեսել բավարար ժամկետ անցումն ապահովելու նպատակով: Նմանապես, անցումային միջոցներ պետք է սահմանվեն ստորագրության ստեղծման այն անվտանգ հարմարանքների համար, որոնց համապատասխանությունը որոշվել է թիվ 1999/93/ԵՀ հրահանգին համապատասխան, ինչպես նաեւ մինչեւ 2016 թվականի հուլիսի 1-ը որակավորման հավաստագրեր տրամադրող հավաստագրման ծառայություն մատուցողների համար: Վերջապես, անհրաժեշտ է նաեւ մինչեւ այդ օրը Հանձնաժողովին տրամադրել կիրարկող ակտեր եւ պատվիրակված ակտեր ընդունելու միջոցներ.

75) սույն կանոնակարգով սահմանված կիրառման ամսաթվերը չեն ազդում առկա այն պարտավորությունների վրա, որոնք արդեն իսկ սահմանված են անդամ պետությունների նկատմամբ Միության իրավունքով, մասնավորապես՝ թիվ 2006/123/ԵՀ հրահանգով.

76) քանի որ սույն կանոնակարգի նպատակներն անդամ պետությունների կողմից չեն կարող բավարար չափով իրականացվել, սակայն, հաշվի առնելով դրանց ազդեցության մասշտաբը, կարող են առավել մեծ հաջողությամբ իրականացվել Միության մակարդակով, Միությունը կարող է միջոցներ ձեռնարկել «Եվրոպական միության մասին» պայմանագրի 5-րդ հոդվածով սահմանված լրացուցչության սկզբունքին համապատասխան: Այդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքին համապատասխան՝ սույն կանոնակարգը չի նախատեսում ավելին, քան անհրաժեշտ է նշված նպատակներն իրագործելու համար.

77) Տվյալների պաշտպանության հարցերով եվրոպական վերահսկիչ մարմնի հետ խորհրդակցություն է անցկացվել Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի ([1]) թիվ 45/2001 (ԵՀ) կանոնակարգի 28-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան, եւ վերջինս 2012 թվականի սեպտեմբերի 27-ին ներկայացրել է եզրակացություն ([2]),

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

ԳԼՈՒԽ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1

Կարգավորման առարկան

Ներքին շուկայի պատշաճ գործունեության եւ միեւնույն ժամանակ էլեկտրոնային նույնականացման միջոցների եւ տրաստային ծառայությունների անվտանգության բավարար մակարդակ ապահովելու նպատակով սույն կանոնակարգով՝

ա) սահմանվում են պայմաններ, որոնցով անդամ պետությունները ճանաչում են ֆիզիկական եւ իրավաբանական անձանց՝ այլ անդամ պետության ծանուցված էլեկտրոնային նույնականացման համակարգերին դասվող էլեկտրոնային նույնականացման միջոցները,

[1] «Համայնքի հաստատությունների եւ մարմինների կողմից իրականացվող անձնական տվյալների մշակման մասով անհատների պաշտպանության եւ այդ տվյալների ազատ տեղաշարժի մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2000 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 45/2001 (ԵՀ) կանոնակարգ (ՊՏ L 8, 2001 թվականի հունվարի 12, էջ 1):
[2] ՊՏ C 28, 2013 թվականի հունվարի 30, էջ 6:

բ) սահմանվում են նորմեր տրաստային ծառայությունների համար, մասնավորապես՝ էլեկտրոնային գործարքներում, եւ

գ) ստեղծվում է իրավական դաշտ՝ էլեկտրոնային ստորագրությունների, էլեկտրոնային կնիքների, էլեկտրոնային ժամանակի դրոշմակնիքների, էլեկտրոնային փաստաթղթերի, էլեկտրոնային եղանակով գրանցված առաքման ծառայությունների եւ կայքի իսկորոշման հավաստագրերի տրամադրման ծառայությունների համար:

Հոդված 2

Գործողության ոլորտը

1. Սույն կանոնակարգի գործողությունը տարածվում է անդամ պետությունների կողմից ծանուցված էլեկտրոնային նույնականացման համակարգերի եւ Միության տարածքում հիմնադրված տրաստային ծառայություն մատուցողների վրա:

2. Սույն կանոնակարգը չի տարածվում այն տրաստային ծառայությունների մատուցման վրա, որոնք օգտագործվում են բացառապես ազգային իրավունքից կամ մասնակիցների որոշակի խմբերի միջեւ կնքված համաձայնագրերից բխող փակ համակարգերի շրջանակներում:

3. Սույն կանոնակարգով չեն շոշափվում պայմանագրերի կնքմանը եւ վավերականությանը կամ ձեւին վերաբերող այլ իրավական կամ ընթացակարգային պարտավորությունների առնչվող ազգային կամ Միության իրավունքը:

Հոդված 3

Սահմանումները

Սույն կանոնակարգի նպատակներով կիրառվում են հետեւյալ սահմանումները.

1) «էլեկտրոնային նույնականացում» նշանակում է էլեկտրոնային ձեւով անձի նույնականացման տվյալների օգտագործման գործընթաց, որը եզակիորեն ներկայացնում է ֆիզիկական կամ իրավաբանական անձին կամ իրավաբանական անձին ներկայացնող ֆիզիկական անձին,

2) «էլեկտրոնային նույնականացման միջոցներ» նշանակում է նյութական եւ (կամ) ոչ նյութական միավոր, որը պարունակում է անձի նույնականացման տվյալներ եւ օգտագործվում է առցանց ծառայության իսկորոշման համար,

3) «անձի նույնականացման տվյալներ» նշանակում է այնպիսի տվյալների խումբ, որոնք հնարավորություն են տալիս հաստատել ֆիզիկական կամ իրավաբանական անձի կամ իրավաբանական անձին ներկայացնող ֆիզիկական անձի ինքնությունը,

4) «էլեկտրոնային նույնականացման համակարգ» նշանակում է էլեկտրոնային նույնականացման համակարգ, որով էլեկտրոնային նույնականացման միջոցները տրամադրվում են ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ իրավաբանական անձին ներկայացնող ֆիզիկական անձանց,

5) «իսկորոշում» նշանակում է էլեկտրոնային գործընթաց, որը թույլ է տալիս հաստատել ֆիզիկական կամ իրավաբանական անձի էլեկտրոնային նույնականացումը կամ էլեկտրոնային ձեւով ներկայացված տվյալների ծագումն ու ամբողջականությունը,

6) «հիմնվող կողմ» նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը հիմնվում է էլեկտրոնային նույնականացման կամ տրաստային ծառայության վրա,

7) «հանրային հատվածի մարմին» նշանակում է պետական, տարածքային կամ տեղական մարմին, հանրային իրավունքով կառավարվող մարմին կամ այդպիսի մեկ կամ մի քանի մարմիններից կամ հանրային իրավունքով կառավարվող այդպիսի մեկ կամ մի քանի մարմիններից կազմված ընկերակցություն կամ այդ մարմիններից առնվազն մեկի կողմից լիազորված մասնավոր ընկերություն, հանրային ծառայություն մատուցող մարմիններ կամ ընկերակցություններ, երբ դրանք գործում են այդպիսի մանդատի ներքո,

8) «հանրային իրավունքով կառավարվող մարմին» նշանակում է Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի թիվ 2014/24/ԵՄ հրահանգի 2(1) հոդվածի 4-րդ կետով սահմանված մարմին [1],

9) «ստորագրող անձ» նշանակում է ֆիզիկական անձ, որը ստեղծում է էլեկտրոնային ստորագրություն,

10) «էլեկտրոնային ստորագրություն» նշանակում է էլեկտրոնային ձեւով ներկայացված տվյալներ, որոնք կցված կամ տրամաբանորեն կապված են էլեկտրոնային ձեւով ներկայացված այլ տվյալների հետ, եւ որոնք օգտագործվում են ստորագրող անձի կողմից ստորագրելու համար,

11) «ժամանակակից էլեկտրոնային ստորագրություն» նշանակում է էլեկտրոնային ստորագրություն, որը բավարարում է 26-րդ հոդվածով սահմանված պահանջները,

12) «որակավորված էլեկտրոնային ստորագրություն» նշանակում է ժամանակակից էլեկտրոնային ստորագրություն, որը ստեղծվել է որակավորված էլեկտրոնային ստորագրության ստեղծման հարմարանքի միջոցով, եւ որը հիմնվում է էլեկտրոնային ստորագրությունների որակավորման հավաստագրի վրա,

[1] Թիվ 2004/18/ԵՀ հրահանգը ուժը կորցրած ճանաչող՝ «Պետական գնումների մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2014 թվականի փետրվարի 26-ի թիվ 2014/24/ԵՄ հրահանգ (ՊՏ L 94, 2014 թվականի մարտի 28, էջ 65):

13) «էլեկտրոնային ստորագրությունների ստեղծման տվյալներ» նշանակում է եզակի տվյալներ, որոնք օգտագործվում են ստորագրող անձի կողմից էլեկտրոնային ստորագրություն ստեղծելու համար,

14) «էլեկտրոնային ստորագրության հավաստագիր» նշանակում է էլեկտրոնային հավաստագիր, որը հաստատում է էլեկտրոնային ստորագրության վավերականության ստուգման տվյալների պատկանելիությունը ֆիզիկական անձին եւ հաստատում է այդ անձի առնվազն անունը կամ կեղծանունը,

15) «էլեկտրոնային ստորագրության որակավորման հավաստագիր» նշանակում է էլեկտրոնային ստորագրությունների հավաստագիր, որը տրամադրվում է որակավորված տրաստային ծառայություն մատուցողի կողմից եւ բավարարում է 1-ին հավելվածում շարադրված պայմանները,

16) «տրաստային ծառայություն» նշանակում է սովորաբար վարձատրության դիմաց մատուցվող էլեկտրոնային ծառայություն, որը ներառում է՝

   ա) էլեկտրոնային ստորագրությունների, էլեկտրոնային կնիքների կամ էլեկտրոնային ժամանակի դրոշմակնիքների, էլեկտրոնային եղանակով գրանցված առաքման ծառայությունների եւ այդ ծառայությունների հետ կապված հավաստագրերի ստեղծում, ստուգում եւ վավերականության ստուգում, կամ

   բ) կայքի իսկորոշման համար հավաստագրերի ստեղծում, ստուգում եւ վավերականության ստուգում, կամ

   գ) էլեկտրոնային ստորագրությունների, կնիքների կամ այդ ծառայությունների հետ կապված հավաստագրերի պահպանում,

17) «որակավորված տրաստային ծառայություն» նշանակում է տրաստային ծառայություն, որը բավարարում է սույն կանոնակարգով սահմանված կիրառելի պահանջները,

18) «համապատասխանության գնահատման մարմին» նշանակում է թիվ 765/2008 (ԵՀ) կանոնակարգի 2-րդ հոդվածի 13-րդ կետով սահմանված մարմինը, որը սույն կանոնակարգին համապատասխան հավատարմագրված է որպես որակավորված տրաստային ծառայություն մատուցողի եւ դրա կողմից մատուցված որակավորված տրաստային ծառայության համապատասխանության գնահատում իրականացնող իրավասու մարմին,

19) «տրաստային ծառայություն մատուցող» նշանակում է ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը, որպես որակավորված կամ չորակավորված տրաստային ծառայություն մատուցող, մատուցում է մեկ կամ մի քանի տրաստային ծառայություններ,

20) «որակավորված տրաստային ծառայություն մատուցող» նշանակում է տրաստային ծառայություն մատուցող, որը մատուցում է մեկ կամ մի քանի տրաստային ծառայություններ, եւ որին վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից տրվել է որակավորման կարգավիճակ,

21) «արտադրանք» նշանակում է տրաստային ծառայության մատուցման նպատակով օգտագործելու համար նախատեսված սարքաշար կամ ծրագրաշար կամ սարքաշարի կամ ծրագրաշարի համապատասխան բաղադրիչներ,

22) «էլեկտրոնային ստորագրության ստեղծման հարմարանք» նշանակում է կազմաձեւված ծրագրաշար կամ սարքաշար, որն օգտագործվում է էլեկտրոնային ստորագրություն ստեղծելու համար,

23) «որակավորված էլեկտրոնային ստորագրության ստեղծման հարմարանք» նշանակում է էլեկտրոնային ստորագրություն ստեղծելու միջոց, որը բավարարում է 2-րդ հավելվածով սահմանված պահանջները,

24) «կնիք ստեղծող» նշանակում է իրավաբանական անձ, որը ստեղծում է էլեկտրոնային կնիքը,

25) «էլեկտրոնային կնիք» նշանակում է էլեկտրոնային ձեւով ներկայացված տվյալներ, որոնք կցված կամ տրամաբանորեն կապակցված են էլեկտրոնային ձեւով ներկայացված այլ տվյալների հետ՝ վերջիններիս ծագումն ու ամբողջականությունն ապահովելու համար,

26) «ժամանակակից էլեկտրոնային կնիք» նշանակում է էլեկտրոնային կնիք, որը բավարարում է 36-րդ հոդվածով սահմանված պահանջները,

27) «որակավորված էլեկտրոնային կնիք» նշանակում է ժամանակակից էլեկտրոնային կնիք, որը ստեղծվել է որակավորված էլեկտրոնային կնիքի ստեղծման հարմարանքի միջոցով եւ էլեկտրոնային կնիքի որակավորման հավաստագրի հիման վրա,

28) «էլեկտրոնային կնիքների ստեղծման տվյալներ» նշանակում է եզակի տվյալներ, որոնք օգտագործվում են էլեկտրոնային կնիք ստեղծողի կողմից էլեկտրոնային կնիք ստեղծելու համար,

29) «էլեկտրոնային կնիքի հավաստագիր» նշանակում է էլեկտրոնային հավաստագիր, որը հաստատում է էլեկտրոնային կնիքի վավերականության ստուգման տվյալների պատկանելիությունն իրավաբանական անձին եւ հաստատում այդ անձի անունը,

30) «էլեկտրոնային կնիքի որակավորման հավաստագիր» նշանակում է էլեկտրոնային կնիքի հավաստագիր, որը տրամադրվում է որակավորված տրաստային ծառայություն մատուցողի կողմից եւ բավարարում է 3-րդ հավելվածում շարադրված պահանջները,

31) «էլեկտրոնային կնիքի ստեղծման հարմարանք» նշանակում է կազմաձեւված ծրագրաշար կամ սարքաշար, որն օգտագործվում է էլեկտրոնային կնիք ստեղծելու համար,

32) «որակավորված էլեկտրոնային կնիքի ստեղծման հարմարանք» նշանակում է էլեկտրոնային կնիքի ստեղծման հարմարանք, որը բավարարում է 2-րդ հավելվածով սահմանված պահանջները համապատասխան փոփոխություններով (mutatis mutandis),

33) «էլեկտրոնային ժամանակի դրոշմակնիք» նշանակում է էլեկտրոնային ձեւով ներկայացված տվյալներ, որոնք էլեկտրոնային ձեւով ներկայացված մյուս տվյալները կապում են որոշակի ժամանակի հետ՝ ապացուցելով, որ այդ տվյալները գոյություն են ունեցել այդ ժամանակ,

34) «որակավորված էլեկտրոնային ժամանակի կնիք» նշանակում է էլեկտրոնային ժամանակի կնիք, որը բավարարում է 42-րդ հոդվածով սահմանված պահանջները,

35) «էլեկտրոնային փաստաթուղթ» նշանակում է ցանկացած բովանդակություն, որը պահվում է էլեկտրոնային ձեւով, մասնավորապես՝ տեքստային գրություն կամ ձայնագրություն, տեսագրություն կամ տեսաձայնագրություն,

36) «էլեկտրոնային եղանակով գրանցված առաքման ծառայություն» նշանակում է ծառայություն, որը հնարավորություն է տալիս էլեկտրոնային միջոցներով տվյալներ փոխանցել երրորդ անձանց միջեւ եւ ապացույցներ է տրամադրում փոխանցված տվյալների հետ աշխատանք կատարած լինելու մասին, այդ թվում՝ տվյալների ուղարկման եւ ստացման մասին, եւ որը փոխանցված տվյալները պաշտպանում է կորստի, գողության, վնասման կամ ցանկացած չարտոնված փոփոխությունների ենթարկվելու ռիսկերից,

37) «էլեկտրոնային եղանակով գրանցված՝ որակավորված առաքման ծառայություն» նշանակում է էլեկտրոնային եղանակով գրանցված առաքման ծառայություն, որը բավարարում է 44-րդ հոդվածով սահմանված պահանջները,

38) «կայքի իսկորոշման հավաստագիր» նշանակում է վկայական, որը թույլ է տալիս իսկորոշել կայքը, եւ որի համաձայն կայքում հղումներ են տեղադրվում այն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, որին տրամադրվել է հավաստագիրը:

39) «կայքի իսկորոշման որակավորման հավաստագիր» նշանակում է կայքի իսկորոշման հավաստագիր, որը տրամադրվում է որակավորված

տրաստային ծառայություն մատուցողի կողմից եւ բավարարում է 4-րդ հավելվածում շարադրված պահանջները,

40) «վավերականության ստուգման տվյալներ» նշանակում է տվյալներ, որոնք օգտագործվում են էլեկտրոնային ստորագրության կամ էլեկտրոնային կնիքի վավերականությունը ստուգելու համար,

41) «վավերականության ստուգում» նշանակում է էլեկտրոնային ստորագրության կամ կնիքի ստուգման եւ հաստատման գործընթաց:

Հոդված 4

Ներքին շուկայի սկզբունքները

1. Անդամ պետության տարածքում չպետք է գործի այլ անդամ պետության տարածքում հիմնադրված տրաստային ծառայություն մատուցողի կողմից տրաստային ծառայությունների մատուցման որեւէ սահմանափակում՝ սույն կանոնակարգով կարգավորվող ոլորտներին վերաբերող հիմքերով:

2. Սույն կանոնակարգին համապատասխանող արտադրանքն ու տրաստային ծառայությունները պետք է ազատորեն շրջանառվեն ներքին շուկայում:

Հոդված 5

Տվյալների մշակում եւ պաշտպանություն

1. Անձնական տվյալների մշակումը պետք է իրականացվի թիվ 95/46/ԵՀ հրահանգին համապատասխան:

2. Չսահմանափակելով ազգային իրավունքով կեղծանուններին շնորհված իրավաբանական ուժը՝ էլեկտրոնային գործարքներում կեղծանունների օգտագործումը չպետք է արգելվի:

ԳԼՈՒԽ II

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄ

Հոդված 6

Փոխադարձ ճանաչումը

1. Երբ ազգային իրավունքով կամ վարչական գործելակերպով պահանջվում է էլեկտրոնային նույնականացման իրականացում՝ էլեկտրոնային նույնականացման միջոցների եւ իսկորոշման օգնությամբ անդամ պետություններից մեկի տարածքում հանրային հատվածի մարմնի կողմից մատուցվող ծառայության առցանց հասանելիության համար, ապա մեկ այլ անդամ պետության տարածքում տրամադրված էլեկտրոնային նույնականացման միջոցները պետք է ճանաչվեն առաջին անդամ պետության տարածքում այդ ծառայության միջսահմանային առցանց իսկորոշման համար՝ պայմանով, որ բավարարվեն հետեւյալ պայմանները.

   ա) էլեկտրոնային նույնականացման միջոցը տրամադրվել է էլեկտրոնային նույնականացման համակարգի շրջանակներում, որն ընդգրկված է Հանձնաժողովի կողմից 9-րդ հոդվածին համապատասխան հրապարակված ցանկում,

   բ) էլեկտրոնային նույնականացման միջոցների արժանահավատության մակարդակը համապատասխանում է հանրային հատվածի համապատասխան մարմնի կողմից առաջին անդամ պետության տարածքում այդ ծառայության առցանց հասանելիության համար պահանջվող արժանահավատության մակարդակին հավասար կամ ավելի բարձր մակարդակին՝ պայմանով, որ այդ էլեկտրոնային նույնականացման միջոցի արժանահավատության մակարդակը զգալի է կամ բարձր,

գ) հանրային հատվածի համապատասխան մարմինն այդ ծառայության առցանց հասանելիության համար օգտագործում է զգալի կամ բարձր արժանահավատության մակարդակ:

Նման ճանաչումը տեղի է ունենում առաջին պարբերության «ա» կետով նախատեսված ցանկը Հանձնաժողովի կողմից հրապարակվելուց ոչ ուշ, քան 12 ամիս հետո:

2. 9-րդ հոդվածին համապատասխան Հանձնաժողովի կողմից հրապարակված ցանկում ընդգրկված էլեկտրոնային նույնականացման համակարգի շրջանակներում տրամադրված եւ արժանահավատության ցածր մակարդակի համապատասխանող՝ էլեկտրոնային նույնականացման միջոցը կարող է ճանաչվել հանրային հատվածի մարմինների կողմից այդ մարմինների կողմից առցանց մատուցվող ծառայության միջսահմանային իսկորոշման նպատակով:

Հոդված 7

Էլեկտրոնային նույնականացման համակարգերի ծանուցման համար ընդունելի լինելը

Էլեկտրոնային նույնականացման համակարգի մասին պետք է ծանուցել 9-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ պայմանով, որ բավարարվում են հետեւյալ բոլոր պայմանները.

ա) էլեկտրոնային նույնականացման համակարգի շրջանակներում էլեկտրոնային նույնականացման միջոցները տրամադրվել են՝

i) ծանուցող անդամ պետության կողմից,

ii) ծանուցող անդամ պետության կողմից տրամադրված լիազորության շրջանակներում, կամ

iii) ծանուցող անդամ պետությունից անկախ եւ ճանաչվում են այդ անդամ պետության կողմից,

բ) էլեկտրոնային նույնականացման համակարգի շրջանակներում էլեկտրոնային նույնականացման միջոցը կարող է օգտագործվել հանրային հատվածի մարմնի կողմից մատուցվող եւ ծանուցող անդամ պետության տարածքում էլեկտրոնային նույնականացում պահանջող՝ առնվազն մեկ ծառայության հասանելիության համար,

գ) էլեկտրոնային նույնականացման համակարգը եւ դրա շրջանակներում տրամադրված էլեկտրոնային նույնականացման միջոցը բավարարում են 8-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված կիրարկող ակտով սահմանված արժանահավատության մակարդակներից առնվազն մեկի պահանջները,

դ) ծանուցող անդամ պետությունը երաշխավորում է, որ տվյալ անձին եզակիորեն ներկայացնող՝ անձի նույնականացման տվյալները 8-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված կիրարկող ակտով սահմանված՝ համապատասխան արժանահավատության մակարդակին վերաբերող տեխնիկական մասնագրերին, ստանդարտներին եւ ընթացակարգերին համապատասխան վերագրվում են 3-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված ֆիզիկական կամ իրավաբանական անձին այդ համակարգով էլեկտրոնային նույնականացման միջոցների տրամադրման պահի դրությամբ,

ե) այդ համակարգի շրջանակներում էլեկտրոնային նույնականացման միջոցներ տրամադրող կողմը ապահովում է, որ էլեկտրոնային նույնականացման միջոցը վերագրվի սույն հոդվածի «դ» կետով նախատեսված անձին՝ 8-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված կիրարկող ակտով սահմանված՝ համապատասխան արժանահավատության մակարդակին վերաբերող տեխնիկական

մասնագրերին, ստանդարտներին եւ ընթացակարգերին համապատասխան,

զ) ծանուցող անդամ պետությունն ապահովում է իսկորոշման առցանց հասանելիություն այնպես, որ այլ անդամ պետության տարածքում հիմնադրված ցանկացած հիմնվող կողմ կարողանա հաստատել էլեկտրոնային եղանակով ստացված՝ անձի նույնականացման տվյալները:

Հանրային հատվածի մարմիններ չհանդիսացող՝ հիմնվող կողմերի համար ծանուցող անդամ պետությունը կարող է սահմանել այդ իսկորոշման հասանելիության պայմանները: Միջսահմանային իսկորոշումը տեղի է ունենում անվճար, երբ այն իրականացվում է հանրային հատվածի մարմնի կողմից մատուցվող առցանց ծառայության առնչությամբ:

Անդամ պետությունները չպետք է նման իսկորոշում իրականացնելու մտադրություն ունեցող՝ հիմնվող կողմերի համար սահմանեն որեւէ հատուկ, անհամաչափ տեխնիկական պահանջ, եթե նման պահանջը խանգարում կամ զգալիորեն խոչընդոտում է ծանուցված էլեկտրոնային նույնականացման համակարգերի փոխգործակցությունը,

է) 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն կատարվող ծանուցումից առնվազն վեց ամիս առաջ ծանուցող անդամ պետությունը մյուս անդամ պետությանը 12-րդ հոդվածի 5-րդ մասով ստանձնած պարտավորությունը կատարելու նպատակով տրամադրում է այդ համակարգի նկարագրությունը՝ 12-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված կիրարկող ակտերով սահմանված ընթացակարգային կարգավորումներին համապատասխան,

ը) էլեկտրոնային նույնականացման համակարգը բավարարում է 12-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված կիրարկող ակտով սահմանված պահանջները:

Հոդված 8

Էլեկտրոնային նույնականացման համակարգերի արժանահավատության մակարդակները

1. 9-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան ծանուցված էլեկտրոնային նույնականացման համակարգում նշվում են այդ համակարգի շրջանակներում տրամադրված էլեկտրոնային նույնականացման միջոցի ցածր, զգալի եւ (կամ) բարձր արժանահավատության մակարդակները:

2. Ցածր, զգալի եւ բարձր արժանահավատության մակարդակները համապատասխանաբար բավարարում են հետեւյալ չափորոշիչները.

   ա) արժանահավատության ցածր մակարդակն էլեկտրոնային նույնականացման համակարգի համատեքստում վերաբերում է էլեկտրոնային նույնականացման այն միջոցին, որով տրամադրվում է անձի ներկայացվող կամ հաստատված ինքնության նկատմամբ վստահության սահմանափակ աստիճան, եւ որը բնութագրվում է՝ հղում կատարելով դրան առնչվող այն տեխնիկական մասնագրերին, ստանդարտներին եւ ընթացակարգերին, այդ թվում՝ տեխնիկական հսկողությանը, որի նպատակն է ինքնության ոչ իրավաչափ օգտագործման կամ փոփոխման ռիսկի նվազեցումը,

   բ) արժանահավատության զգալի մակարդակն էլեկտրոնային նույնականացման համակարգի համատեքստում վերաբերում է էլեկտրոնային նույնականացման այն միջոցին, որով տրամադրվում է անձի ներկայացվող կամ հաստատված ինքնության նկատմամբ վստահության զգալի աստիճան, եւ որը բնութագրվում է՝ հղում կատարելով դրան առնչվող այն տեխնիկական մասնագրերին, ստանդարտներին եւ ընթացակարգերին, այդ թվում՝ տեխնիկական հսկողությանը, որի նպատակն է ինքնության ոչ իրավաչափ օգտագործման կամ փոփոխման ռիսկի զգալի նվազեցումը,

գ) արժանահավատության բարձր մակարդակն էլեկտրոնային նույնականացման համակարգի համատեքստում վերաբերում է էլեկտրոնային նույնականացման այն միջոցին, որով տրամադրվում է անձի ներկայացվող կամ հաստատված ինքնության նկատմամբ վստահության ավելի բարձր աստիճան, քան տրամադրվում է արժանահավատության զգալի մակարդակ ապահովող էլեկտրոնային նույնականացման միջոցներով, եւ որը բնութագրվում է՝ հղում կատարելով դրան առնչվող այն տեխնիկական մասնագրերին, ստանդարտներին եւ ընթացակարգերին, այդ թվում՝ տեխնիկական հսկողությունը, որի նպատակն է ինքնության ոչ իրավաչափ օգտագործման կամ փոփոխման ռիսկը կանխելը:

3. Հանձնաժողովը, հաշվի առնելով համապատասխան միջազգային ստանդարտները եւ 2-րդ պարբերությանը համապատասխան, մինչեւ 2015 թվականի սեպտեմբերի 18-ը կիրարկող ակտերի միջոցով կսահմանի նվազագույն տեխնիկական մասնագրեր, ստանդարտներ եւ ընթացակարգեր, որոնց առնչությամբ, 1-ին պարբերության նպատակներից ելնելով, նշվում են էլեկտրոնային նույնականացման միջոցների նկատմամբ արժանահավատության ցածր, զգալի եւ բարձր մակարդակները:

Այդ նվազագույն տեխնիկական մասնագրերը, ստանդարտներն ու ընթացակարգերը պետք է սահմանվեն՝ հաշվի առնելով հետեւյալ տարրերի հուսալիությունը եւ որակը

ա) էլեկտրոնային նույնականացման միջոցների տրամադրման համար դիմում ներկայացնող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց ինքնության հաստատման եւ ստուգման ընթացակարգ,

բ) հայցված էլեկտրոնային նույնականացման միջոցների տրամադրման ընթացակարգ,

գ) իսկորոշման մեխանիզմ, որի միջոցով ֆիզիկական կամ իրավաբանական անձն օգտագործում է էլեկտրոնային նույնականացման միջոցը՝ հիմնվող կողմի ինքնությունը հաստատելու համար,

դ) էլեկտրոնային նույնականացման միջոցը տրամադրող սուբյեկտ,

ե) էլեկտրոնային նույնականացման միջոցի տրամադրումը հայցելու գործընթացում ներգրավված ցանկացած այլ մարմին, եւ

զ) տրամադրված էլեկտրոնային նույնականացման միջոցի տեխնիկական եւ անվտանգային բնութագրեր:

Այդ կիրարկող ակտերն ընդունվում են 48-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված ուսումնասիրության ընթացակարգի համաձայն:

Հոդված 9

Ծանուցումը

1. Ծանուցող անդամ պետությունը Հանձնաժողովին է հաղորդում հետեւյալ տեղեկատվությունը եւ առանց անհարկի ուշացման՝ ծանուցում է դրանում կատարվելիք ցանկացած հետագա փոփոխության մասին.

ա) էլեկտրոնային նույնականացման համակարգի նկարագրությունը, այդ թվում՝ դրա արժանահավատության մակարդակները, եւ այդ համակարգի շրջանակներում էլեկտրոնային նույնականացման միջոցը տրամադրողի (տրամադրողների) մասին տվյալներ,

բ) վերահսկողության կիրառվող ռեժիմը եւ հետեւյալի մասով պատասխանատվության ռեժիմի մասին տեղեկություններ՝

i) էլեկտրոնային նույնականացման միջոցը տրամադրող կողմը, եւ

ii) իսկորոշման ընթացակարգն իրականացնող կողմը,

գ) էլեկտրոնային նույնականացման համակարգի համար պատասխանատու մարմինը կամ մարմինները,

դ) անձի նույնականացման եզակի տվյալների գրանցումն իրականացնող սուբյեկտի կամ սուբյեկտների մասին տեղեկատվություն,

ե) 12-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված կիրարկող ակտով սահմանված պահանջները բավարարելու եղանակների նկարագրությունը,

զ) 7-րդ հոդվածի «զ» կետով նախատեսված իսկորոշման նկարագրությունը,

է) ծանուցված էլեկտրոնային նույնականացման համակարգը կամ իսկորոշումը կամ խաթարված մասերը կասեցնելու կամ չեղարկելու կարգավորումները:

2. 8-րդ հոդվածի 3-րդ կետով եւ 12-րդ հոդվածի 8-րդ կետով նախատեսված կիրարկող ակտերի կիրառման օրվանից հետո մեկ տարվա ընթացքում Հանձնաժողովը *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* հրապարակում է էլեկտրոնային նույնականացման այն համակարգերի ցանկը, որոնք ծանուցվել են սույն հոդվածի 1-ին պարբերությանը եւ դրանում ներառված բազային տեղեկատվությանը համապատասխան:

3. Եթե Հանձնաժողովը ծանուցումը ստանում է 2-րդ պարբերության մեջ նշված ժամկետը լրանալուց հետո, ապա այն պետք է այդ ծանուցումը ստանալուց հետո 2 ամսվա ընթացքում *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* հրապարակի 2-րդ պարբերությամբ նախատեսված ցանկում կատարված փոփոխությունները:

4. Անդամ պետությունը կարող է Հանձնաժողով ներկայացնել այդ անդամ պետության կողմից ծանուցված էլեկտրոնային նույնականացման համակարգը 2-րդ պարբերությամբ նախատեսված ցանկից հանելու պահանջով դիմում: Հանձնաժողովն անդամ պետության պահանջով

դիմումը ստանալու օրվանից հետո մեկ ամսվա ընթացքում *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* հրապարակում է ցանկում կատարված համապատասխան փոփոխությունները:

5. Հանձնաժողովը կարող է կիրարկող ակտերի միջոցով սահմանել 1-ին պարբերության շրջանակներում կատարվող ծանուցումների հանգամանքները, ձեւաչափերը եւ ընթացակարգերը: Այդ կիրարկող ակտերն ընդունվում են 48-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ուսումնասիրության ընթացակարգի համաձայն:

Հոդված 10

Անվտանգության խախտում

1. Եթե 9-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան ծանուցված էլեկտրոնային նույնականացման համակարգը կամ 7-րդ հոդվածի «զ» կետով նախատեսված իսկորոշումը խախտվել է կամ մասնակիորեն խաթարվել է այնպես, որ դա ազդում է այդ համակարգի միջսահմանային իսկորոշման հուսալիության վրա, ապա ծանուցող անդամ պետությունն անհապաղ կասեցնում կամ չեղարկում է այդ միջսահմանային իսկորոշումը կամ խաթարված մասերը եւ այդ մասին տեղեկացնում է մյուս անդամ պետություններին եւ Հանձնաժողովին:

2. Երբ 1-ին պարբերությամբ նախատեսված խախտումը կամ խաթարումը վերացվում է, ծանուցող անդամ պետությունը վերականգնում է միջսահմանային իսկորոշումը եւ այդ մասին, առանց անհարկի ուշացման, տեղեկացնում է մյուս անդամ պետություններին եւ Հանձնաժողովին:

3. Եթե 1-ին պարբերությամբ նախատեսված խախտումը կամ խաթարումը չի վերացվում կասեցումից կամ չեղարկումից հետո երեք ամսվա ընթացքում, ապա ծանուցող անդամ պետությունը մյուս անդամ պետություններին եւ Հանձնաժողովին ծանուցում է էլեկտրոնային նույնականացման համակարգից հրաժարվելու մասին:

Հանձնաժողովը, առանց անհարկի ուշացման, *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* հրապարակում է 9-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ցանկում կատարված համապատասխան փոփոխությունները:

Հոդված 11

Պատասխանատվությունը

1. Ծանուցող անդամ պետությունը պատասխանատվություն է կրում միջսահմանային գործարքի շրջանակներում 7-րդ հոդվածի «դ» եւ «զ» կետերով սահմանված պարտավորությունները չկատարելու արդյունքում որեւէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի՝ դիտավորությամբ կամ անզգուշությամբ պատճառված վնասի համար:

2. Էլեկտրոնային նույնականացման միջոցներ տրամադրող կողմը պատասխանատվություն է կրում միջսահմանային գործարքի շրջանակներում 7-րդ հոդվածի «ե» կետով սահմանված պարտավորությունները չկատարելու արդյունքում որեւէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի՝ դիտավորությամբ կամ անզգուշությամբ պատճառված վնասի համար:

3. Իսկորոշման գործընթացն իրականացնող կողմը պատասխանատվություն է կրում միջսահմանային գործարքի շրջանակներում 7-րդ հոդվածի «զ» կետով նախատեսված իսկորոշման ճշգրիտ կատարումը չապահովելու արդյունքում որեւէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի՝ դիտավորությամբ կամ անզգուշությամբ պատճառված վնասի համար:

4. 1-ին, 2-րդ եւ 3-րդ պարբերությունները կիրառվում են պատասխանատվության մասին ազգային նորմերին համապատասխան:

5. 1-ին, 2-րդ եւ 3-րդ պարբերությունները չեն հակասում այն գործարքի կողմերի համար ազգային իրավունքի շրջանակներում սահմանված

պատասխանատվությանը, որում օգտագործվում են էլեկտրոնային նույնականացման այն միջոցները, որոնց վրա տարածվում է 9-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան ծանուցված էլեկտրոնային նույնականացման համակարգի գործողությունը:

Հոդված 12

Համագործակցությունը եւ փոխգործակցությունը

1. 9-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան ծանուցված ազգային էլեկտրոնային նույնականացման համակարգերը փոխգործակցելի են:

2. 1-ին պարբերության նպատակներով անհրաժեշտ է ստեղծել փոխգործակցության մեխանիզմ:

3. Փոխգործակցության մեխանիզմը պետք է բավարարի հետեւյալ չափորոշիչները.

   ա) այն պետք է լինի տեխնոլոգիապես չեզոք, եւ դրանով չպետք է խտրականություն դրվի անդամ պետության տարածքում էլեկտրոնային նույնականացման կոնկրետ ազգային տեխնիկական լուծումների միջեւ,

   բ) հնարավորության դեպքում այն պետք է համապատասխանի եվրոպական եւ միջազգային ստանդարտներին,

   գ) այն իր կառուցվածքով պետք է դյուրացնի մասնավոր կյանքի անձեռնմխելիության սկզբունքի իրականացումը, եւ

   դ) այն պետք է ապահովի անձնական տվյալների մշակումը թիվ 95/46/ԵՀ հրահանգին համապատասխան:

4. Փոխգործակցության մեխանիզմը բաղկացած է հետեւյալից.

   ա) հղում 8-րդ հոդվածով սահմանված արժանահավատության մակարդակների հետ կապված նվազագույն տեխնիկական պահանջներին,

բ) ծանուցված էլեկտրոնային նույնականացման համակարգերի արժանահավատության ազգային մակարդակների եւ 8-րդ հոդվածով սահմանված արժանահավատության մակարդակների համադրման սխեմա,

գ) հղում փոխգործակցության նվազագույն տեխնիկական պահանջներին,

դ) հղում ֆիզիկական կամ իրավաբանական անձին եզակի ձեւով ներկայացնող՝ անձը նույնականացնող տվյալների նվազագույն կազմին, որը հասանելի է էլեկտրոնային նույնականացման համակարգերի միջոցով,

ե) աշխատակարգ,

զ) վեճերի լուծման համաձայնություններ, եւ

է) աշխատանքային անվտանգության ընդհանուր ստանդարտներ:

5. Անդամ պետությունները համագործակցում են հետեւյալի մասով.

ա) 9-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան ծանուցված էլեկտրոնային նույնականացման համակարգերի եւ այն էլեկտրոնային նույնականացման համակարգերի փոխգործակցություն, որոնց մասին անդամ պետությունները մտադիր են ծանուցել, եւ

բ) էլեկտրոնային նույնականացման համակարգերի անվտանգություն:

6. Անդամ պետությունների միջեւ համագործակցությունը բաղկացած է հետեւյալից.

ա) էլեկտրոնային նույնականացման համակարգերին եւ մասնավորապես՝ փոխգործակցությանը եւ արժանահավատության գնահատման մակարդակներին առնչվող տեխնիկական պահանջների մասով տեղեկատվության, փորձի եւ լավագույն փորձի փոխանակում,

բ) 8-րդ հոդվածին համապատասխան էլեկտրոնային նույնականացման համակարգերի արժանահավատության մակարդակների հետ

աշխատանքի մասով տեղեկատվության, փորձի եւ լավագույն փորձի փոխանակում,

գ) այն էլեկտրոնային նույնականացման համակարգերի փորձագիտական գնահատումը, որոնց վրա տարածվում է սույն կանոնակարգի գործողությունը, եւ

դ) էլեկտրոնային նույնականացման ոլորտում համապատասխան զարգացումների ուսումնասիրություն:

7. Մինչեւ 2015 թվականի մարտի 18-ը Հանձնաժողովը կիրարկող ակտերի միջոցով սահմանում է անհրաժեշտ ընթացակարգային միջոցներ՝ հեշտացնելու անդամ պետությունների միջեւ 5-րդ եւ 6-րդ պարբերություններով նախատեսված համագործակցությունը՝ ռիսկի աստիճանին համապատասխան բարձր մակարդակի վստահությունը եւ անվտանգությունը խթանելու նպատակով:

8. Մինչեւ 2015 թվականի սեպտեմբերի 18-ը 1-ին պարբերությամբ սահմանված պահանջի կատարման համար միասնական պայմաններ սահմանելու նպատակով Հանձնաժողովը, 3-րդ պարբերությամբ սահմանված չափորոշիչներին համապատասխան եւ հաշվի առնելով անդամ պետությունների միջեւ համագործակցության արդյունքները, ընդունում է փոխգործակցության մեխանիզմի կիրարկող ակտեր՝ 4-րդ պարբերության մեջ սահմանված կարգով:

9. Սույն հոդվածի 7-րդ եւ 8-րդ պարբերություններով նախատեսված կիրարկող ակտերը ընդունվում են 48-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ուսումնասիրման ընթացակարգին համապատասխան:

ԳԼՈՒԽ III

ՏՐԱՍՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԱԺԻՆ 1

Ընդհանուր դրույթներ

Հոդված 13

Պատասխանատվությունը եւ ապացուցման բեռը

1. Չհակասելով 2-րդ պարբերությանը՝ տրաստային ծառայություն մատուցողները պատասխանատվություն են կրում սույն կանոնակարգով սահմանված պարտավորությունները չկատարելու արդյունքում որեւէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի՝ դիտավորությամբ կամ անզգուշությամբ պատճառված վնասի համար:

Չորակավորված տրաստային ծառայություն մատուցողների դիտավորության կամ անզգուշության ապացուցման պարտականությունը կրում է այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որը պահանջում է առաջին ենթապարբերությամբ նախատեսված վնասի հատուցումը:

Որակավորված տրաստային ծառայություն մատուցողների դիտավորության կամ անզգուշության առկայությունը ենթադրվում է, եթե այդ որակավորված տրաստային ծառայություն մատուցողը չի ապացուցել, որ առաջին ենթապարբերության մեջ նշված վնասը պատճառվել է առանց որակավորված տրաստային ծառայություն մատուցողի դիտավորության կամ անզգուշության:

2. Եթե տրաստային ծառայություն մատուցողներն իրենց սպառողներին նախօրոք պատշաճ կերպով տեղեկացնում են իրենց տրամադրած ծառայություններն օգտագործելու սահմանափակումների մասին, եւ եթե այդ

սահմանափակումներն ընդունելի են երրորդ կողմի համար, ապա տրաստային ծառայություն մատուցողները պատասխանատվություն չեն կրում նշված սահմանափակումները գերազանցող ծառայություններից օգտվելու պատճառով կրած վնասների համար:

3. 1-ին եւ 2-րդ պարբերությունները կիրառվում են պատասխանատվության մասին ազգային նորմերին համապատասխան:

Հոդված 14

Միջազգային կարգավորման հարցերը

1. Երրորդ երկրում հիմնադրված՝ տրաստային ծառայություն մատուցողների կողմից մատուցված տրաստային ծառայությունները ճանաչվում են որպես Միության տարածքում հիմնադրված տրաստային ծառայություն մատուցողների կողմից մատուցված որակավորված տրաստային ծառայություններին իրավաբանորեն համարժեք ծառայություններ, եթե երրորդ երկրից ծագող տրաստային ծառայությունները ճանաչվել են Միության եւ տվյալ երրորդ երկրի կամ միջազգային կազմակերպության միջեւ ԵՄԳՊ-ի 218-րդ հոդվածին համապատասխան կնքված համաձայնագրով:

2. 1-րդ պարբերությամբ նախատեսված համաձայնագրերը մասնավորապես ապահովում են, որ՝

   ա) Միության տարածքում հիմնադրված որակավորված տրաստային ծառայություն մատուցողների եւ իրենց կողմից մատուցվող որակավորված տրաստային ծառայությունների նկատմամբ կիրառվող պահանջները բավարարեն երրորդ երկրի տրաստային ծառայություն մատուցողները կամ այն միջազգային կազմակերպությունները, որոնց հետ համաձայնագիր է կնքվել, ինչպես նաեւ իրենց կողմից մատուցվող տրաստային ծառայությունները:

բ) Միության տարածքում հիմնադրված որակավորված տրաստային ծառայություն մատուցողների կողմից մատուցված որակավորված տրաստային ծառայությունները ճանաչվեն որպես այն ծառայություններին իրավաբանորեն համարժեք ծառայություններ, որոնք մատուցվել են երրորդ երկրի տրաստային ծառայություն մատուցողների կամ այն միջազգային կազմակերպության կողմից, որոնց հետ համաձայնագիր է կնքվել:

Հոդված 15

Հաշմանդամություն ունեցող անձանց կողմից հասանելիությունը

Մատուցված տրաստային ծառայությունները եւ այդ ծառայությունների մատուցման համար օգտագործված վերջնական սպառողի արտադրանքը, եթե իրագործելի է, պետք է հասանելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց:

Հոդված 16

Տույժերը

Անդամ պետությունները պետք է կանոններ սահմանեն այն տույժերի վերաբերյալ, որոնք կիրառվում են սույն կանոնակարգի դրույթների խախտումների դեպքում: Նախատեսված տույժերը պետք է լինեն արդյունավետ, համաչափ եւ համոզիչ:

ԲԱԺԻՆ 2

Վերահսկողություն

Հոդված 17

Վերահսկողություն իրականացնող մարմինը

1. Անդամ պետությունները նշանակում են իրենց տարածքում հիմնադրված վերահսկողություն իրականացնող մարմին կամ այլ անդամ պետության տարածքում հիմնադրված վերահսկողություն իրականացնող մարմին՝ այլ անդամ պետության հետ փոխադարձ համաձայնությամբ: Այդ մարմինը պատասխանատու է նշանակող անդամ պետության տարածքում վերահսկողական առաջադրանքների կատարման համար:

Վերահսկողություն իրականացնող մարմիններին տրվում են անհրաժեշտ լիազորություններ եւ համապատասխան ռեսուրսներ՝ իրենց առաջադրանքները կատարելու համար:

2. Անդամ պետությունները Հանձնաժողովին ծանուցում են իրենց կողմից նշանակված վերահսկողություն իրականացնող համապատասխան մարմինների անվանումները եւ հասցեները:

3. Վերահսկողություն իրականացնող մարմնի գործառույթներն են՝

   ա) նշանակող անդամ պետության տարածքում հիմնադրված որակավորված տրաստային ծառայություն մատուցողների նկատմամբ վերահսկողության իրականացում՝ նպատակ ունենալով նախնական *(ex ante)* եւ փաստացի *(ex post*) վերահսկողական գործունեության միջոցով ապահովել սույն կանոնակարգում շարադրված պահանջներին այդ որակավորված տրաստային ծառայություն մատուցողների եւ նրանց կողմից մատուցվող որակավորված տրաստային ծառայությունների համապատասխանությունը,

բ) անհրաժեշտության դեպքում նշանակող անդամ պետության տարածքում հիմնադրված չորակավորված տրաստային ծառայություն մատուցողների նկատմամբ միջոցների ձեռնարկում՝ փաստացի (ex post) վերահսկողական գործունեության միջոցով այն դեպքում, երբ տեղեկացվել է, որ չորակավորված տրաստային ծառայություն մատուցողները կամ նրանց կողմից մատուցվող տրաստային ծառայությունները ենթադրվում է, որ չեն բավարարում սույն կանոնակարգում շարադրված պահանջները:

4. 3-րդ պարբերության նպատակներից ելնելով եւ սույն փաստաթղթում ներկայացված սահմանափակումների պահպանմամբ՝ վերահսկողություն իրականացնող մարմնի առաջադրանքները ներառում են մասնավորապես՝

ա) վերահսկողություն իրականացնող այլ մարմինների հետ համագործակցություն եւ աջակցության տրամադրում ՝ 18-րդ հոդվածին համապատասխան,

բ) 20-րդ հոդվածի 1-ին կետում եւ 21-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված համապատասխանության գնահատման հաշվետվությունների վերլուծություն,

գ) վերահսկողություն իրականացնող մյուս մարմիններին եւ հանրությանը անվտանգության խախտումների կամ ամբողջականության կորստի մասին ծանուցում՝ 19-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան,

դ) Հանձնաժողովին իր հիմնական գործունեության մասին զեկուցում՝ սույն հոդվածի 6-րդ պարբերությամբ սահմանված կարգով,

ե) աուդիտի իրականացում կամ որակավորված տրաստային ծառայություն մատուցողների համապատասխանության գնահատում կատարելու պահանջի ներկայացում համապատասխանության գնահատման մարմնին՝ 20-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով,

զ) տվյալների պաշտպանությամբ զբաղվող մարմինների հետ համագործակցություն, օրինակ՝ նրանց որակավորված տրաստային ծառայություն մատուցողների մոտ անցկացված աուդիտի արդյունքների մասին առանց անհարկի ուշացման տեղեկացնելու միջոցով այն դեպքում, երբ խախտվել են անձնական տվյալների պաշտպանության կանոնները,

է) որակավորման կարգավիճակի շնորհում եւ այդ կարգավիճակից զրկում տրաստային ծառայություն մատուցողներին եւ նրանց կողմից մատուցվող ծառայություններին՝ 20-րդ եւ 21-րդ հոդվածներին համապատասխան,

ը) 22-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված ազգային տրաստային ցանկի համար պատասխանատու մարմնին որակավորման կարգավիճակի շնորհման կամ դրանից զրկելու իր որոշման մասին տեղեկացում, եթե այդ մարմինը միաժամանակ վերահսկողություն իրականացնող մարմինը չէ,

թ) դադարեցման ծրագրի դրույթների, այդ թվում՝ 24-րդ հոդվածի 2-րդ կետի «ը» ենթակետին համապատասխան տեղեկատվության հասանելիության եղանակների առկայության եւ ճշգրիտ կիրառման ստուգում այն դեպքերում, երբ որակավորված տրաստային ծառայություն մատուցողը դադարեցնում է իր գործունեությունը,

ժ) տրաստային ծառայություն մատուցողների կողմից սույն կանոնակարգում շարադրված պահանջների չկատարման հետեւանքները հատուցելու պահանջի ներկայացում:

5. Անդամ պետությունները կարող են վերահսկողություն իրականացնող մարմնից պահանջել տրաստային ենթակառուցվածքի ստեղծում, պահպանում եւ թարմացում՝ ազգային իրավունքով սահմանված պայմաններին համապատասխան:

6. Յուրաքանչյուր տարի՝ մինչեւ մարտի 31-ը, վերահսկողություն իրականացնող յուրաքանչյուր մարմին Հանձնաժողով է ներկայացնում նախորդ օրացուցային տարվա ընթացքում իր հիմնական գործունեության վերաբերյալ հաշվետվություն՝ տրաստային ծառայություն մատուցողներից ստացված՝ խախտումների մասին ծանուցումների ամփոփ նկարագրության հետ միասին՝ 19-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան:

7. Հանձնաժողովը 6-րդ պարբերության մեջ նշված տարեկան հաշվետվությունը հասանելի է դարձնում անդամ պետություններին:

8. Հանձնաժողովը կարող է կիրարկող ակտերի միջոցով սահմանել 6-րդ պարբերության մեջ նշված հաշվետվության ձեւաչափերն ու ընթացակարգերը: Այդ կիրարկող ակտերն ընդունվում են 48-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված ուսումնասիրության ընթացակարգի համաձայն:

Հոդված 18

Փոխադարձ օգնությունը

1. Վերահսկողություն իրականացնող մարմինները համագործակցում են լավագույն փորձի փոխանակման ակնկալիքով:

Վերահսկողություն իրականացնող մարմինը վերահսկողություն իրականացնող այլ մարմնից հիմնավոր պահանջ ստանալուն պես այդ մարմնին օգնություն է տրամադրում վերահսկողություն իրականացնող մարմինների գործունեության հետեւողական իրականացումն ապահովելու համար: Փոխադարձ օգնությունը կարող է ներառել մասնավորապես տեղեկատվության տրամադրման պահանջով դիմումներ եւ վերահսկողական միջոցներ, օրինակ՝ 20-րդ եւ 21-րդ հոդվածներով նախատեսված համապատասխանության գնահատման հաշվետվությունների հետ կապված ստուգումներ իրականացնելու պահանջով դիմումները:

2. Վերահսկողություն իրականացնող այն մարմինը, որին հասցեագրվել է օգնություն ցուցաբերելու պահանջով դիմում, կարող է մերժել այդ պահանջով դիմումը հետեւյալ հիմքերից որեւէ մեկով.

ա) վերահսկողություն իրականացնող մարմինը իրավասու չէ տրամադրել հայցվող օգնությունը,

բ) հայցվող օգնությունը համաչափ չէ վերահսկողություն իրականացնող մարմնի՝ 17-րդ հոդվածին համապատասխան իրականացված վերահսկողական գործունեությանը,

գ) հայցվող օգնության տրամադրումն անհամատեղելի է սույն կանոնակարգի դրույթների հետ:

3. Անհրաժեշտության դեպքում անդամ պետությունները կարող են իրենց համապատասխան վերահսկողություն իրականացնող մարմիններին լիազորել իրականացնելու համատեղ ուսումնասիրություններ, որում ներգրավված կլինի այլ անդամ պետության վերահսկողություն իրականացնող մարմիններից կազմված անձնակազմ: Այդպիսի համատեղ գործողությունների համար պայմանավորվածություններն ու ընթացակարգերը համաձայնեցվում են եւ սահմանվում շահագրգիռ անդամ պետությունների կողմից՝ դրանց ազգային իրավունքին համապատասխան:

Հոդված 19

Տրաստային ծառայություն մատուցողների նկատմամբ կիրառելի անվտանգության պահանջները

1. Որակավորված եւ չորակավորված տրաստային ծառայություն մատուցողները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ տեխնիկական եւ կազմակերպչական միջոցներ՝ իրենց կողմից մատուցվող տրաստային ծառայությունների անվտանգությանը սպառնացող ռիսկերը կառավարելու

համար: Հաշվի առնելով վերջին տեխնոլոգիական զարգացումները՝ այդ միջոցներն ապահովում են, որ անվտանգության մակարդակը համաչափ լինի ռիսկի աստիճանին: Մասնավորապես միջոցներ են ձեռնարկվում անվտանգության հետ կապված միջադեպերը կանխելու եւ նվազագույնի հասցնելու, ինչպես նաեւ շահագրգիռ կողմերին այդպիսի միջադեպերի բացասական ազդեցությունների մասին տեղեկացնելու համար:

2. Որակավորված եւ չորակավորված տրաստային ծառայություն մատուցողները, առանց անհարկի ուշացման, սակայն ցանկացած դեպքում դրա մասին տեղեկանալուց հետո 24 ժամվա ընթացքում, վերահսկողություն իրականացնող մարմնին եւ կիրառելիության դեպքում՝ համապատասխան մյուս մարմիններին, օրինակ՝ տեղեկատվության անվտանգության մասով իրավասու ազգային մարմնին կամ տվյալների պաշտպանության մարմնին, տեղեկացնում են անվտանգության ցանկացած խախտման կամ ամբողջականության կորստի մասին, որը զգալի ազդեցություն է ունենում մատուցվող տրաստային ծառայության կամ դրանում պահպանվող անձնական տվյալների վրա:

Եթե անվտանգության խախտումը կամ ամբողջականության կորուստը հավանական է, որ անբարենպաստ ազդեցություն կունենա այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի վրա, որոնց մատուցվել է տրաստային ծառայությունը, ապա տրաստային ծառայություն մատուցողը, առանց անհարկի ուշացման, ծանուցում է նաեւ ֆիզիկական կամ իրավաբանական անձին անվտանգության խախտման կամ ամբողջականության կորստի մասին:

Անհրաժեշտության դեպքում, մասնավորապես եթե անվտանգության խախտումը կամ ամբողջականության կորուստը վերաբերում է երկու կամ ավելի անդամ պետությունների, ապա ծանուցված վերահսկողություն իրականացնող մարմինը այդ մասին տեղեկացնում է մյուս շահագրգիռ անդամ պետության վերահսկողություն իրականացնող մարմիններին եւ ԵՑՏԱԳ-ին:

Ծանուցված վերահսկողություն իրականացնող մարմինն այդ մասին տեղեկացնում է կամ պահանջում է, որ տրաստային ծառայություն մատուցողը տեղեկացնի հանրությանը, եթե գտնում է, որ անվտանգության խախտման կամ ամբողջականության կորստի բացահայտումը բխում է հանրային շահից:

3. Վերահսկողություն իրականացնող մարմինը տարին մեկ անգամ ԵՑՏԱԳ-ին է տրամադրում անվտանգության խախտման եւ ամբողջականության կորստի մասին տրաստային ծառայություն մատուցողներից ստացված ծանուցումների ամփոփ նկարագրությունը:

4. Հանձնաժողովը կարող է կիրարկող ակտերի միջոցով՝

   ա) լրացուցիչ հստակեցնել 1-ին պարբերության մեջ նշված միջոցները, եւ

   բ) սահմանել 2-րդ պարբերության նպատակներով կիրառվող ձեւաչափերն ու ընթացակարգերը, այդ թվում՝ վերջնաժամկետները:

Այդ կիրարկող ակտերն ընդունվում են 48-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված ուսումնասիրության ընթացակարգի համաձայն:

ԲԱԺԻՆ 3

Որակավորված տրաստային ծառայություններ

Հոդված 20

Որակավորված տրաստային ծառայություն մատուցողների նկատմամբ վերահսկողությունը

1. Որակավորված տրաստային ծառայություն մատուցողներն իրենց միջոցների հաշվին առնվազն յուրաքանչյուր 24 ամիսը մեկ աուդիտ են անցնում համապատասխանության գնահատման մարմնի կողմից: Աուդիտի նպատակն է հաստատել, որ որակավորված տրաստային ծառայություն

մատուցողները եւ նրանց կողմից մատուցվող որակավորված տրաստային ծառայությունները համապատասխանում են սույն կանոնակարգում շարադրված պահանջներին: Որակավորված տրաստային ծառայություն մատուցողները համապատասխանության գնահատման վերջնական հաշվետվությունն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում այն ներկայացնում են վերահսկողություն իրականացնող մարմին:

2. Չհակասելով 1-ին պարբերությանը՝ վերահսկողություն իրականացնող մարմինը կարող է ցանկացած ժամանակ աուդիտի ենթարկել կամ պահանջել, որ համապատասխանության գնահատման մարմինը որակավորված տրաստային ծառայություն մատուցողների մոտ այդ տրաստային ծառայություն մատուցողների միջոցների հաշվին իրականացնի համապատասխանության գնահատում՝ համոզվելու համար, որ նրանք եւ նրանց կողմից մատուցվող որակավորված տրաստային ծառայությունները համապատասխանում են սույն կանոնակարգում շարադրված պահանջներին: Անձնական տվյալների պաշտպանության նորմերը խախտվելու դեպքում վերահսկողություն իրականացնող մարմինը տվյալների պաշտպանություն իրականացնող մարմիններին տեղեկացնում է աուդիտի արդյունքների մասին:

3. Եթե վերահսկողություն իրականացնող մարմինը որակավորված տրաստային ծառայություն մատուցողից պահանջում է հատուցել սույն կանոնակարգով սահմանված պահանջների չկատարման հետեւանքները, իսկ մատուցողը չի կատարում այդ պահանջը, եւ եթե առկա է վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից սահմանված ժամանակահատվածում կիրառման հնարավորություն, ապա վերահսկողություն իրականացնող մարմինը, հաշվի առնելով մասնավորապես այդպիսի չկատարման սահմանները, տեւողությունը եւ հետեւանքները, կարող է չեղարկել այդ ծառայություն մատուցողի կամ նրա կողմից մատուցվող՝ ազդակիր ծառայության որակավորման կարգավիճակը եւ այդ մասին տեղեկացնել 22-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված

մարմնին՝ 22-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված տրաստային ցանկերը թարմացնելու նպատակով: Վերահսկողություն իրականացնող մարմինը որակավորված տրաստային ծառայություն մատուցողին տեղեկացնում է իր որակավորման կարգավիճակի կամ տվյալ ծառայության որակավորման կարգավիճակի չեղարկման մասին:

4. Հանձնաժողովը կարող է կիրարկող ակտերի միջոցով սահմանել հետեւյալ ստանդարտների հերթական համարը.

ա) համապատասխանության գնահատման մարմինների եւ 1-ին պարբերության մեջ նշված համապատասխանության գնահատման հաշվետվության հավատարմագրում,

բ) աուդիտի կանոնները, որոնց համաձայն համապատասխանության գնահատման մարմիններն իրականացնում են 1-ին պարբերության մեջ նշված որակավորված տրաստային ծառայություն մատուցողների՝ իրենց կողմից իրականացվող համապատասխանության գնահատումը:

Այդ կիրարկող ակտերն ընդունվում են 48-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված ուսումնասիրության ընթացակարգի համաձայն:

Հոդված 21

Որակավորված տրաստային ծառայության մատուցման նախաձեռնումը

1. Եթե որակավորման կարգավիճակ չունեցող տրաստային ծառայություն մատուցողները մտադրվում են սկսել որակավորված տրաստային ծառայությունների մատուցումը, ապա նրանք պետք է վերահսկողություն իրականացնող մարմին ներկայացնեն իրենց մտադրության մասին ծանուցում՝ համապատասխանության գնահատման մարմնի կողմից տրամադրված համապատասխանության գնահատման հաշվետվության հետ միասին:

2. Վերահսկողություն իրականացնող մարմինը ստուգում է սույն կանոնակարգում շարադրված պահանջներին եւ մասնավորապես՝ որակավորված տրաստային ծառայություն մատուցողներին եւ նրանց կողմից մատուցվող որակավորված տրաստային ծառայություններին ներկայացվող պահանջներին տրաստային ծառայություն մատուցողների եւ նրանց կողմից մատուցվող տրաստային ծառայությունների համապատասխանությունը:

Եթե վերահսկողություն իրականացնող մարմինը գտնում է, որ տրաստային ծառայություն մատուցողը եւ նրա կողմից մատուցվող տրաստային ծառայությունը համապատասխանում են առաջին ենթապարբերության մեջ նշված պահանջներին, ապա վերահսկողություն իրականացնող մարմինը տրաստային ծառայություն մատուցողին եւ նրա կողմից մատուցվող տրաստային ծառայություններին շնորհում է որակավորման կարգավիճակ եւ 22-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված մարմնին 22-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված տրաստային ցանկերը թարմացնելու նպատակով տեղեկացնում է այդ մասին ոչ ուշ, քան սույն հոդվածի 1-ին պարբերությանը համապատասխան ծանուցումն ստանալուց հետո երեք ամսվա ընթացքում:

Եթե ստուգումը չի ավարտվում ծանուցումից հետո երեք ամսվա ընթացքում, ապա վերահսկողություն իրականացնող մարմինն այդ մասին տեղեկացնում է տրաստային ծառայություն մատուցողին՝ նշելով ուշացման պատճառները եւ այն ժամկետը, որի ընթացքում պետք է ավարտվի ստուգումը:

3. Որակավորված տրաստային ծառայություն մատուցողները կարող են սկսել որակավորված տրաստային ծառայության մատուցումը 22-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված տրաստային ցանկերում որակավորման կարգավիճակը նշելուց հետո:

4. Հանձնաժողովը կարող է կիրարկող ակտերի միջոցով սահմանել ձեւաչափեր ու ընթացակարգեր 1-ին եւ 2-րդ պարբերությունների նպատակներով: Այդ կիրարկող ակտերն ընդունվում են 48-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված ուսումնասիրության ընթացակարգի համաձայն:

Հոդված 22

Տրաստային ցանկեր

1. Յուրաքանչյուր անդամ պետություն կազմում, վարում եւ հրապարակում է տրաստային ցանկեր, այդ թվում՝ այն որակավորված տրաստային ծառայություն մատուցողների վերաբերյալ տեղեկություններ, որոնց համար պատասխանատու է՝ նրանց կողմից մատուցվող որակավորված տրաստային ծառայությունների վերաբերյալ տեղեկությունների հետ միասին:

2. Անդամ պետություններն անվտանգ ձեւով կազմում, վարում եւ հրապարակում են 1-ին պարբերության մեջ նշված էլեկտրոնային եղանակով ստորագրված կամ կնքված տրաստային ցանկերը՝ ավտոմատացված մշակման համար հարմար եղանակով:

3. Անդամ պետությունները, առանց անհարկի ուշացման, Հանձնաժողովին տեղեկություններ են հայտնում ազգային տրաստային ցանկերը կազմելու, վարելու եւ հրապարակելու համար պատասխանատու մարմնի մասին եւ մանրամասն տվյալներ այն մասին, թե որտեղ են հրապարակվել այդ ցանկերը, ինչ հավաստագրեր են օգտագործվել այդ տրաստային ցանկերը ստորագրելու կամ կնքելու համար, եւ ինչ փոփոխություններ են կատարվել դրանցում:

4. Հանձնաժողովն անվտանգ կապուղով, ավտոմատացված մշակման համար հարմար էլեկտրոնային եղանակով ստորագրված կամ կնքված ձեւով հանրությանը հասանելի է դարձնում 3-րդ պարբերության մեջ նշված տեղեկատվությունը:

5. Մինչեւ 2015 թվականի սեպտեմբերի 18-ը Հանձնաժողովը կիրարկող ակտերի միջոցով նշում է 1-ին պարբերության մեջ նշված տեղեկատվությունը եւ սահմանում այն տեխնիկական բնութագրերը եւ ձեւաչափերը, որոնք կիրառելի են 1-4-րդ պարբերությունների նպատակների համար: Այդ կիրարկող ակտերն ընդունվում են 48-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված ուսումնասիրության ընթացակարգի համաձայն:

Հոդված 23

Որակավորված տրաստային ծառայությունների համար ԵՄ տրաստային նշանը

1. 21-րդ հոդվածի երկրորդ կետի երկրորդ ենթապարբերության մեջ նշված որակավորման կարգավիճակը 22-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված տրաստային ցանկում ներառելուց հետո որակավորված տրաստային ծառայություն մատուցողները կարող են օգտագործել ԵՄ տրաստային նշանը, որով պարզ, հասկանալի եւ հստակ ձեւով նշվում են նրանց կողմից մատուցվող որակավորված տրաստային ծառայությունները:

2. 1-ին պարբերության մեջ նշված որակավորված տրաստային ծառայությունների համար ԵՄ տրաստային նշանը օգտագործելիս որակավորված տրաստային ծառայություն մատուցողներն ապահովում են, որ իրենց կայքում հասանելի լինի հղում համապատասխան տրաստային ցանկին:

3. Մինչեւ 2015 թվականի հուլիսի 1-ը Հանձնաժողովը կիրարկող ակտերի միջոցով նախատեսում է մասնագրեր՝ կապված որակավորված տրաստային ծառայությունների համար ԵՄ տրաստային նշանի ձեւի եւ մասնավորապես՝ այդ նշանի ներկայացման, կազմի, չափի եւ տեխնիկական լուծման հետ: Այդ կիրարկող ակտերն ընդունվում են 48-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված ուսումնասիրության ընթացակարգի համաձայն:

Հոդված 24

Որակավորված տրաստային ծառայություն մատուցողներին ներկայացվող պահանջները

1. Տրաստային ծառայության համար որակավորման հավաստագիր տրամադրելիս որակավորված տրաստային ծառայություն մատուցողը համապատասխան միջոցներով եւ ազգային իրավունքին համապատասխան

ստուգում է այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի ինքնությունը եւ կիրառելիության դեպքում՝ այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի որեւէ կոնկրետ առանձնահատկություն, որին շնորհվել է որակավորման հավաստագիրը:

Առաջին ենթապարբերության մեջ նշված տեղեկատվությունը ստուգվում է որակավորված տրաստային ծառայություն մատուցողի կողմից ուղղակիորեն կամ ազգային իրավունքին համապատասխան երրորդ կողմին ապավինելու միջոցով՝

ա) ֆիզիկական անձի կամ իրավաբանական անձի լիազորված ներկայացուցչի ֆիզիկական ներկայության միջոցով, կամ

բ) հեռավար, էլեկտրոնային նույնականացման միջոցների օգտագործմամբ, որի համար նախքան որակավորման հավաստագրի շնորհումն ապահովվում է ֆիզիկական անձի կամ իրավաբանական անձի լիազորված ներկայացուցչի ֆիզիկական ներկայությունը, եւ որը համապատասխանում է արժանահավատության հաստատման «զգալի» կամ «բարձր» մակարդակի մասով 8-րդ հոդվածով սահմանված պահանջներին, կամ

գ) «ա» կամ «բ» կետերին համապատասխան տրամադրված որակավորված էլեկտրոնային ստորագրության կամ որակավորված էլեկտրոնային կնիքի հավաստագրի միջոցով, կամ

դ) ազգային մակարդակում ընդունված այլ նույնականացման միջոցներ օգտագործելու միջոցով, որոնք ֆիզիկական ներկայության արժանահավատության տեսանկյունից համարժեք վստահություն են ապահովում: Համարժեք երաշխիքը հաստատվում է համապատասխանության գնահատման մարմնի կողմից:

2. Որակավորված տրաստային ծառայություն մատուցող որակավորված տրաստային ծառայություն մատուցողը՝

ա) վերահսկողություն իրականացնող մարմնին տեղեկացնում է իր կողմից որակավորված տրաստային ծառայությունների մատուցման ցանկացած փոփոխության եւ այդ գործունեությունը դադարեցնելու մտադրության մասին,

բ) աշխատանքի է ընդունում անձնակազմի անդամներին եւ եթե կիրառելի է, անհրաժեշտ փորձառություն, հուսալիություն, փորձ եւ որակավորումներ ունեցող ենթակատարողների, որոնք անցել են անվտանգության եւ անձնական տվյալների պաշտպանության կանոնների մասով համապատասխան վերապատրաստում, եւ կիրառում է եվրոպական կամ միջազգային ստանդարտներին համապատասխանող վարչակառավարչական ընթացակարգեր,

գ) 13-րդ հոդվածին համապատասխան վնասների համար պատասխանատվության ռիսկի մասով ունի բավարար ֆինանսական ռեսուրսներ եւ (կամ) ձեռք է բերել պատճառված վնասի համար պատշաճ պատասխանատվության ապահովագիր՝ ազգային իրավունքին համապատասխան,

դ) նախքան պայմանագրային հարաբերություններ հաստատելը որակավորված տրաստային ծառայություններից օգտվելու ցանկություն ունեցող ցանկացած անձի հստակ եւ համապարփակ ձեւով ներկայացնում է այդ ծառայությունից օգտվելու կոնկրետ ժամկետներն ու պայմանները՝ ներառելով դրա օգտագործման ցանկացած սահմանափակում,

ե) օգտագործում է հուսալի համակարգեր եւ արտադրանք, որոնք պաշտպանված են դրանցում կատարվող փոփոխությունների հետեւանքներից, եւ ապահովում է դրանց օգնությամբ իրականացվող գործընթացների տեխնիկական անվտանգությունը եւ հուսալիությունը,

զ) օգտագործում է հուսալի համակարգեր՝ իրեն տրամադրված տվյալները դրանց ստուգման հնարավորությունն ապահովող ձեւով պահելու համար այնպես, որ՝

i) դրանք հասանելի լինեն հանրությանը մշակման համար միայն այն դեպքում, երբ ստացվել է այն անձի համաձայնությունը, որին վերաբերում են տվյալները,

ii) միայն լիազորված անձինք կարողանան մուտքագրել եւ փոփոխություններ կատարել պահվող տվյալներում,

iii) հնարավոր լինի տվյալների իսկորոշումը,

է) ձեռնարկում է համապատասխան միջոցներ՝ տվյալները կեղծելուց եւ հափշտակելուց պաշտպանելու համար,

ը) գրանցում եւ որոշակի ժամանակահատվածում, այդ թվում՝ որակավորված տրաստային ծառայություն մատուցողի գործունեության դադարեցումից հետո հասանելի է դարձնում տրաստային ծառայություն մատուցողի կողմից տրամադրված եւ ստացված տվյալներին վերաբերող բոլոր կարեւոր տեղեկությունները, մասնավորապես՝ դատական վարույթներում ապացույցներ տրամադրելու եւ ծառայության շարունակականությունն ապահովելու նպատակներով: Այդպիսի գրանցումները կարող են կատարվել էլեկտրոնային եղանակով,

թ) ունի դադարեցման թարմացված ծրագիր ծառայության շարունակականությունն ապահովելու համար՝ վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից 17-րդ հոդվածի 4-րդ կետի «թ» ենթակետի համաձայն ստուգված դրույթներին համապատասխան,

ժ) ապահովում է անձնական տվյալների իրավաչափ մշակումը՝ թիվ 95/46/ԵՀ հրահանգին համապատասխան,

ժա) որակավորված տրաստային ծառայություն մատուցողների կողմից տրամադրվող որակավորման հավաստագրերի դեպքում ստեղծում եւ կանոնավոր կերպով թարմացնում է հավաստագրերի տվյալների շտեմարանը:

3. Եթե որակավորման հավաստագրեր տրամադրող՝ որակավորված տրաստային ծառայություն մատուցողը որոշում է չեղարկել հավաստագիրը, ապա այն պետք է այդպիսի չեղարկումը գրանցի հավաստագրերի տվյալների շտեմարանում եւ ժամանակին, սակայն ցանկացած դեպքում պահանջը ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում հրապարակի հավաստագրի չեղարկման կարգավիճակը: Չեղարկումն ուժի մեջ է մտնում դրա հրապարակումից հետո անմիջապես:

4. Ինչ վերաբերում է 3-րդ պարբերությանը, ապա որակավորման հավաստագրեր տրամադրող՝ որակավորված տրաստային ծառայություն մատուցողները ցանկացած հիմնվող կողմի տեղեկություններ են ներկայացնում իրենց կողմից տրամադրված որակավորման հավաստագրերի վավերականության կամ չեղարկման կարգավիճակի մասին: Այս տեղեկությունները պետք է հասանելի լինեն առնվազն յուրաքանչյուր հավաստագրի հիմքով, ցանկացած ժամանակ եւ հավաստագրի գործողության ժամկետի շրջանակներից դուրս այնպիսի ավտոմատացված ձեւով, որը հուսալի է, անվճար եւ արդյունավետ:

5. Հանձնաժողովը կարող է կիրարկող ակտերի միջոցով հերթական համարներ սահմանել այն հուսալի համակարգերի եւ արտադրանքի ստանդարտների համար, որոնք համապատասխանում են սույն հոդվածի 2-րդ պարբերության «ե» եւ «զ» կետերով սահմանված պահանջներին: Սույն հոդվածով շարադրված պահանջների պահպանման հանգամանքը ենթադրվում է հուսալի համակարգերի եւ արտադրանքի՝ այդ ստանդարտներին համապատասխանության դեպքում: Այդ կիրարկող ակտերն ընդունվում են 48-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված ուսումնասիրության ընթացակարգի համաձայն:

ԲԱԺԻՆ 4

Էլեկտրոնային ստորագրությունները

Հոդված 25

Էլեկտրոնային ստորագրության իրավական նշանակությունը

1. Էլեկտրոնային ստորագրությունը չպետք է զրկվի իրավական ուժից եւ դատական վարույթներում որպես ապացույց ճանաչվելու հնարավորությունից բացառապես այն հիմքով, որ այն ներկայացված է էլեկտրոնային ձեւով կամ չի համապատասխանում որակավորված էլեկտրոնային ստորագրություններին ներկայացվող պահանջներին:

2. Որակավորված էլեկտրոնային ստորագրությունն ունի ձեռագիր ստորագրությանը համազոր իրավական ուժ:

3. Մեկ անդամ պետության տարածքում տրամադրված որակավորման հավաստագրի վրա հիմնված որակավորված էլեկտրոնային ստորագրությունը մյուս բոլոր անդամ պետություններում ճանաչվում է որպես որակավորված էլեկտրոնային ստորագրություն:

Հոդված 26

Ժամանակակից էլեկտրոնային ստորագրություններին ներկայացվող պահանջները

Ժամանակակից էլեկտրոնային ստորագրությունը պետք է բավարարի հետեւյալ պահանջները.

ա) այն բացառապես կապված է ստորագրող անձի հետ,

բ) դրա միջոցով կարելի է նույնականացնել ստորագրող անձին,

գ) այն ստեղծվել է էլեկտրոնային ստորագրության ստեղծման այն տվյալներն օգտագործելու միջոցով, որոնք ստորագրող անձը կարող է վստահության բարձր մակարդակով պահել իր միանձնյա հսկողության ներքո, եւ

դ) այն կապված է դրանով ստորագրված տվյալների հետ այնպես, որ դրանց ցանկացած հետագա փոփոխություն հնարավոր է հայտնաբերել:

Հոդված 27

Էլեկտրոնային ստորագրությունները հանրային ծառայություններում

1. Եթե անդամ պետության կողմից պահանջվում է ժամանակակից էլեկտրոնային ստորագրության օգտագործում հանրային հատվածի մարմնի կողմից կամ նրա անունից առաջարկվող առցանց ծառայությունից օգտվելու համար, ապա այդ անդամ պետությունը պետք է ճանաչի ժամանակակից էլեկտրոնային ստորագրությունները, էլեկտրոնային ստորագրությունների որակավորման հավաստագրի վրա հիմնված ժամանակակից էլեկտրոնային ստորագրությունները եւ որակավորված էլեկտրոնային ստորագրությունները՝ առնվազն 5-րդ պարբերությամբ նախատեսված կիրարկող ակտերում սահմանված ձեւաչափերով կամ մեթոդներով:

2. Եթե անդամ պետության կողմից պահանջվում է որակավորման հավաստագրի վրա հիմնված ժամանակակից էլեկտրոնային ստորագրությունների օգտագործում հանրային հատվածի մարմնի կողմից կամ նրա անունից առաջարկվող առցանց ծառայությունից օգտվելու համար, ապա այդ անդամ պետությունը պետք է ճանաչի որակավորման հավաստագրի վրա հիմնված ժամանակակից էլեկտրոնային ստորագրությունները եւ որակավորված էլեկտրոնային ստորագրությունները՝ առնվազն 5-րդ պարբերությամբ նախատեսված կիրարկող ակտերով սահմանված ձեւաչափերով կամ մեթոդներով:

3. Անդամ պետությունները չպետք է պահանջեն այն էլեկտրոնային ստորագրության միջսահմանային օգտագործումը հանրային հատվածի մարմնի կողմից առաջարկվող առցանց ծառայությունում, որն ունի անվտանգության ավելի բարձր մակարդակ, քան որակավորված էլեկտրոնային ստորագրությունը:

4. Հանձնաժողովը կարող է կիրարկող ակտերի միջոցով սահմանել ժամանակակից էլեկտրոնային ստորագրությունների ստանդարտների հերթական համարները: Ենթադրվում է, որ սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ պարբերություններում եւ 26-րդ հոդվածով նախատեսված ժամանակակից էլեկտրոնային ստորագրությունների պահանջներին համապատասխանությունը, առկա է այն դեպքում, երբ ժամանակակից էլեկտրոնային ստորագրությունը բավարարում է այդ ստանդարտները: Այդ կիրարկող ակտերն ընդունվում են 48-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված ուսումնասիրության ընթացակարգի համաձայն:

5. Մինչեւ 2015 թվականի սեպտեմբերի 18-ը եւ հաշվի առնելով գոյություն ունեցող գործելակերպերը, ստանդարտներն ու Միության իրավական ակտերը՝ Հանձնաժողովը կիրարկող ակտերի միջոցով սահմանում է ժամանակակից էլեկտրոնային ստորագրությունների հղումների ձեւաչափերը կամ այլընտրանքային ձեւաչափերի օգտագործման դեպքում՝ հղումների մեթոդները: Այդ կիրարկող ակտերն ընդունվում են 48-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված ուսումնասիրության ընթացակարգի համաձայն:

Հոդված 28

Էլեկտրոնային ստորագրությունների որակավորման հավաստագրերը

1. Էլեկտրոնային ստորագրությունների որակավորման հավաստագրերը բավարարում են 1-ին հավելվածում շարադրված պահանջները:

2. Էլեկտրոնային ստորագրությունների որակավորման հավաստագրերի նկատմամբ չպետք է սահմանվի 1-ին հավելվածում շարադրված պահանջներից բացի որեւէ հավելյալ պարտադիր պահանջ:

3. Էլեկտրոնային ստորագրությունների որակավորման հավաստագրերը կարող են ներառել լրացուցիչ ոչ պարտադիր հատուկ հատկանիշներ: Այդ հատկանիշները չպետք է ազդեն որակավորված էլեկտրոնային ստորագրությունների փոխգործակցության եւ ճանաչման վրա:

4. Եթե էլեկտրոնային ստորագրությունների որակավորման հավաստագիրը չեղարկվել է սկզբնական ակտիվացումից հետո, ապա այն կարող է կորցնել իր վավերականությունը իր չեղարկման պահից, եւ դրա կարգավիճակը ոչ մի դեպքում չի վերականգնվում:

5. Անդամ պետությունները կարող են սահմանել ազգային նորմեր՝ էլեկտրոնային ստորագրության որակավորման հավաստագրի ժամանակավոր կասեցման վերաբերյալ՝ հետեւյալ պայմանների պահպանմամբ.

ա) եթե էլեկտրոնային ստորագրության որակավորման հավաստագիրը ժամանակավորապես կասեցվել է, ապա այդ հավաստագիրը կորցնում է իր վավերականությունը կասեցման ժամանակահատվածում,

բ) կասեցման ժամանակահատվածը հստակ կերպով նշվում է հավաստագրերի տվյալների շտեմարանում եւ կասեցման կարգավիճակը տեսանելի է կասեցման ժամանակահատվածում՝ հավաստագրի կարգավիճակի մասին տեղեկատվություն տրամադրող ծառայության միջոցով:

6. Հանձնաժողովը կարող է կիրարկող ակտերի միջոցով սահմանել էլեկտրոնային ստորագրության որակավորման հավաստագրերի ստանդարտների հերթական համարները: Ենթադրվում է, որ 1-ին հավելվածում շարադրված պահանջները պահպանված են այն դեպքում, երբ էլեկտրոնային ստորագրության որակավորման հավաստագիրը

համապատասխանում է այդ ստանդարտներին: Այդ կիրարկող ակտերն ընդունվում են 48-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված ուսումնասիրության ընթացակարգի համաձայն:

Հոդված 29

Որակավորված էլեկտրոնային ստորագրության ստեղծման հարմարանքներին ներկայացվող պահանջները

1. Որակավորված էլեկտրոնային ստորագրության ստեղծման հարմարանքները պետք է բավարարեն 2-րդ հավելվածում շարադրված պահանջները:

2. Հանձնաժողովը կարող է կիրարկող ակտերի միջոցով սահմանել որակավորված էլեկտրոնային ստորագրության ստեղծման հարմարանքների մասով ստանդարտների հերթական համարները: Ենթադրվում է, որ 2-րդ հավելվածում շարադրված պահանջները պահպանված են այն դեպքում, երբ որակավորված էլեկտրոնային ստորագրության ստեղծման հարմարանքը համապատասխանում է այդ ստանդարտներին: Այդ կիրարկող ակտերն ընդունվում են 48-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված ուսումնասիրության ընթացակարգի համաձայն:

Հոդված 30

Որակավորված էլեկտրոնային ստորագրության ստեղծման հարմարանքի հավաստագրումը

1. Որակավորված էլեկտրոնային ստորագրության ստեղծման հարմարանքների համապատասխանությունը 2-րդ հավելվածով սահմանված պահանջներին հաստատվում է անդամ պետությունների կողմից նշանակված պետական կամ մասնավոր ոլորտի համապատասխան մարմինների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողովին հաղորդում են 1-ին պարբերությամբ սահմանված պետական կամ մասնավոր ոլորտի մարմինների անվանումները եւ հասցեները: Հանձնաժողովը պետք է ապահովի այս տեղեկությունների հասանելիությունը անդամ պետություններին:

3. 1-ին պարբերությամբ սահմանված հավաստագրումն իրականացվում է հետեւյալ հիմքերից որեւէ մեկով.

   ա) երկրորդ ենթապարբերության համաձայն սահմանված ցանկում ընդգրկված տեղեկատվական տեխնոլոգիաների արտադրանքի անվտանգության գնահատման ստանդարտներից մեկին համապատասխան իրականացվող անվտանգության գնահատման գործընթաց, կամ

   բ) «ա» կետով նախատեսված գործընթացից տարբեր գործընթաց՝ պայմանով որ դրանում օգտագործված են անվտանգության համեմատելի մակարդակներ, եւ պայմանով, որ 1-ին պարբերությամբ սահմանված պետական կամ մասնավոր ոլորտի մարմիններն այդ գործընթացի մասին ծանուցում են Հանձնաժողովին: Այդ գործընթացը կարող է օգտագործվել միայն «ա» կետով նախատեսված ստանդարտի բացակայության դեպքում կամ երբ «ա» կետով նախատեսված անվտանգության գնահատման գործընթացն ընթացքի մեջ է:

Հանձնաժողովը կիրարկող ակտերի միջոցով սահմանում է «ա» կետով նախատեսված տեղեկատվական տեխնոլոգիաների արտադրանքի անվտանգության գնահատման ստանդարտների ցանկը: Այդ կիրարկող ակտերն ընդունվում են 48-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված ուսումնասիրության ընթացակարգի համաձայն:

4. Հանձնաժողովն իրավասու է 47-րդ հոդվածին համապատասխան ընդունել պատվիրակված ակտեր, որոնք վերաբերում են սույն հոդվածի 1-ին

պարբերությամբ սահմանված՝ նշանակված մարմինների կողմից պահպանման ենթակա կոնկրետ չափորոշիչների սահմանմանը:

Հոդված 31

Որակավորված էլեկտրոնային ստորագրության ստեղծման հավաստագրված հարմարանքների ցանկի հրապարակումը

1. Անդամ պետությունները, առանց անհարկի ուշացման եւ ոչ ուշ, քան հավաստագրումը ավարտելուց հետո մեկ ամսվա ընթացքում, Հանձնաժողովին հայտնում են 30-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված մարմինների կողմից հավաստագրված՝ որակավորված էլեկտրոնային ստորագրության ստեղծման հարմարանքների մասին տեղեկությունները: Նրանք նաեւ, առանց անհարկի ուշացման եւ ոչ ուշ, քան հավաստագրումը չեղարկելուց հետո մեկ ամսվա ընթացքում, Հանձնաժողովին հայտնում են էլեկտրոնային ստորագրության ստեղծման այն հարմարանքների մասին տեղեկություններ, որոնք այլեւս հավաստագրված չեն:

2. Ստացված տեղեկատվության հիման վրա Հանձնաժողովը կազմում, հրապարակում եւ վարում է որակավորված էլեկտրոնային ստորագրության ստեղծման՝ հավաստագրված հարմարանքների ցանկը:

3. Հանձնաժողովը կարող է կիրարկող ակտերի միջոցով սահմանել 1-ին պարբերության նպատակներով կիրառվող ձեւաչափերն ու ընթացակարգերը: Այդ կիրարկող ակտերն ընդունվում են 48-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված ուսումնասիրության ընթացակարգի համաձայն:

Հոդված 32

Որակավորված էլեկտրոնային ստորագրությունների վավերականության ստուգմանը ներկայացվող պահանջները

1. Որակավորված էլեկտրոնային ստորագրության վավերականության ստուգման գործընթացով հաստատվում է որակավորված էլեկտրոնային ստորագրության վավերականությունը՝ պայմանով, որ՝

ա) ստորագրությունը հաստատող հավաստագիրը ստորագրման պահին համարվել է էլեկտրոնային ստորագրության որակավորման հավաստագիր, որը համապատասխանել է 1-ին հավելվածի պահանջներին,

բ) որակավորման հավաստագիրը տրամադրվել է որակավորված տրաստային ծառայություն մատուցողի կողմից եւ ստորագրման պահին համարվել է վավեր,

գ) ստորագրության վավերականության ստուգման տվյալները համապատասխանում են հիմնվող կողմին տրամադրվող տվյալներին,

դ) հավաստագրում ստորագրող կողմին ներկայացնող եզակի տվյալների փաթեթը պատշաճորեն տրամադրվել է հիմնվող կողմին,

ե) ցանկացած կեղծանվան օգտագործման մասին հստակորեն տեղեկացվում է հիմնվող կողմին, եթե ստորագրման պահին օգտագործվել է որեւէ կեղծանուն,

զ) էլեկտրոնային ստորագրությունը ստեղծվել է որակավորված էլեկտրոնային ստորագրության ստեղծման հարմարանքի միջոցով,

է) ստորագրված տվյալների ամբողջականությունը խախտվել է,

ը) 26-րդ հոդվածով նախատեսված պահանջները բավարարվել են ստորագրման պահին:

2. Որակավորված էլեկտրոնային ստորագրության վավերականության ստուգման համար օգտագործվող համակարգը հիմնվող կողմին տրամադրում է վավերականության ստուգման գործընթացի ճշգրիտ արդյունք եւ հիմնվող կողմին հնարավորություն է տալիս բացահայտել անվտանգության հետ կապված ցանկացած հարց:

3. Հանձնաժողովը կարող է կիրարկող ակտերի միջոցով սահմանել որակավորված էլեկտրոնային ստորագրությունների վավերականության ստուգման ստանդարտների հերթական համարները: Ենթադրվում է, որ 1-ին պարբերությամբ սահմանված պահանջները պահպանված են այն դեպքում, երբ որակավորված էլեկտրոնային ստորագրությունների վավերականության ստուգումը համապատասխանում է այդ ստանդարտներին: Այդ կիրարկող ակտերն ընդունվում են 48-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված ուսումնասիրության ընթացակարգի համաձայն:

Հոդված 33

Որակավորված էլեկտրոնային ստորագրությունների որակավորման վավերականության ստուգման ծառայություն

1. Որակավորված էլեկտրոնային ստորագրությունների որակավորման վավերականության ստուգման ծառայությունը կարող է տրամադրվել որակավորված տրաստային ծառայություն մատուցողի կողմից, որը՝

ա) ապահովում է վավերականության ստուգում՝ 32-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան, եւ

բ) հիմնվող կողմերին հնարավորություն է տալիս ստանալ վավերականության ստուգման գործընթացի արդյունքն ավտոմատացված եղանակով, որը հուսալի է, արդյունավետ եւ կրում է որակավորման վավերականության ստուգման ծառայություն մատուցողի ժամանակակից էլեկտրոնային ստորագրությունը կամ ժամանակակից էլեկտրոնային կնիքը:

2. Հանձնաժողովը կարող է կիրարկող ակտերի միջոցով սահմանել 1-ին պարբերությամբ նախատեսված՝ որակավորման վավերականության ստուգման ծառայության ստանդարտների հերթական համարները: Ենթադրվում է, որ 1-ին պարբերությամբ նախատեսված պահանջները պահպանված են այն դեպքում, երբ որակավորված էլեկտրոնային ստորագրությունների վավերականության ստուգման ծառայությունը համապատասխանում է այդ ստանդարտներին: Այդ կիրարկող ակտերն ընդունվում են 48-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված ուսումնասիրության ընթացակարգի համաձայն:

Հոդված 34

Որակավորված էլեկտրոնային ստորագրությունների որակավորման պահպանման ծառայություն

1. Որակավորված էլեկտրոնային ստորագրությունների որակավորման պահպանման ծառայությունը կարող է մատուցվել միայն այն որակավորված տրաստային ծառայություն մատուցողի կողմից, որն օգտագործում է այնպիսի ընթացակարգեր եւ տեխնոլոգիաներ, որոնք ունակ են որակավորված էլեկտրոնային ստորագրության վստահելիությունը տարածել տեխնոլոգիական վավերականության ժամկետի սահմաններից դուրս:

2. Հանձնաժողովը կարող է կիրարկող ակտերի միջոցով սահմանել որակավորված էլեկտրոնային ստորագրությունների որակավորման պահպանման ծառայության ստանդարտների հերթական համարները: Ենթադրվում է, որ 1-ին պարբերությամբ նախատեսված պահանջները պահպանված են այն դեպքում, երբ որակավորված էլեկտրոնային ստորագրությունների որակավորման պահպանման ծառայության վերաբերյալ կարգավորումները համապատասխանում են այդ ստանդարտներին: Այդ կիրարկող ակտերն ընդունվում են 48-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված ուսումնասիրության ընթացակարգի համաձայն:

ԲԱԺԻՆ 5

Էլեկտրոնային կնիքները

Հոդված 35

Էլեկտրոնային կնիքների իրավական ուժը

1. Էլեկտրոնային կնիքը չպետք է զրկված լինի իրավական ուժից եւ դատական վարույթներում որպես ապացույց ճանաչվելու հնարավորությունից բացառապես այն հիմքով, որ այն ներկայացված է էլեկտրոնային ձեւով կամ չի համապատասխանում որակավորված էլեկտրոնային կնիքներին ներկայացվող պահանջներին:

2. Որակավորված էլեկտրոնային կնիքի համար պետք է գործի որակավորված էլեկտրոնային կնիքին վերաբերող տվյալների ամբողջականության եւ տվյալների ծագման ճշգրտության կանխավարկածը:

3. Մեկ անդամ պետության տարածքում տրամադրված որակավորման հավաստագրի վրա հիմնված որակավորված էլեկտրոնային կնիքը մյուս բոլոր անդամ պետություններում ճանաչվում է որպես որակավորված էլեկտրոնային կնիք:

Հոդված 36

Ժամանակակից էլեկտրոնային կնիքներին ներկայացվող պահանջները

Ժամանակակից էլեկտրոնային կնիքը պետք է բավարարի հետեւյալ պահանջները.

ա) այն բացառապես կապված է կնիքը ստեղծող անձի հետ,

բ) դրա միջոցով կարելի է նույնականացնել կնիքը ստեղծող անձին,

գ) այն ստեղծվել է էլեկտրոնային կնիքի ստեղծման այն տվյալներն օգտագործելու միջոցով, որոնք կնիքը ստեղծող անձը կարող է վստահության բարձր մակարդակով, իր միանձնյա հսկողության ներքո օգտագործել էլեկտրոնային կնիքի ստեղծման համար, եւ

դ) այն կապված է դրան վերաբերող տվյալների հետ այնպես, որ դրանց ցանկացած հետագա փոփոխություն հնարավոր լինի հետագծել:

Հոդված 37

Էլեկտրոնային կնիքները հանրային ծառայություններում

1. Եթե անդամ պետության կողմից պահանջվում է ժամանակակից էլեկտրոնային կնիքի օգտագործում հանրային հատվածի մարմնի կողմից կամ նրա անունից առաջարկվող առցանց ծառայությունից օգտվելու համար, ապա այդ անդամ պետությունը պետք է ճանաչի ժամանակակից էլեկտրոնային կնիքները, էլեկտրոնային կնիքների որակավորման հավաստագրի վրա հիմնված ժամանակակից էլեկտրոնային կնիքները եւ որակավորված էլեկտրոնային կնիքներն առնվազն 5-րդ պարբերությամբ նախատեսված կիրարկող ակտերով սահմանված ձեւաչափերով եւ մեթոդներով:

2. Եթե անդամ պետության կողմից պահանջվում է որակավորման հավաստագրի վրա հիմնված ժամանակակից էլեկտրոնային կնիքի օգտագործում հանրային հատվածի մարմնի կողմից կամ նրա անունից առաջարկվող առցանց ծառայությունից օգտվելու համար, ապա այդ անդամ պետությունը պետք է ճանաչի որակավորման հավաստագրի վրա հիմնված ժամանակակից էլեկտրոնային կնիքները եւ որակավորված էլեկտրոնային կնիքն առնվազն 5-րդ պարբերությամբ նախատեսված կիրարկող ակտերով սահմանված ձեւաչափերով կամ մեթոդներով:

3. Անդամ պետությունները չպետք է պահանջեն այն էլեկտրոնային կնիքի միջսահմանային օգտագործումը հանրային հատվածի մարմնի կողմից առաջարկվող առցանց ծառայությունում, որն ունի անվտանգության ավելի բարձր մակարդակ, քան որակավորված էլեկտրոնային կնիքը:

4. Հանձնաժողովը կարող է կիրարկող ակտերի միջոցով սահմանել ժամանակակից էլեկտրոնային կնիքների ստանդարտների հերթական համարները: Ենթադրվում է, որ սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ պարբերություններում եւ 36-րդ հոդվածով նախատեսված ժամանակակից էլեկտրոնային կնիքներին ներկայացվող պահանջները պահպանված են այն դեպքում, երբ ժամանակակից էլեկտրոնային կնիքը բավարարում է այդ ստանդարտները: Այդ կիրարկող ակտերն ընդունվում են 48-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված ուսումնասիրության ընթացակարգի համաձայն:

5. Մինչեւ 2015 թվականի սեպտեմբերի 18-ը եւ հաշվի առնելով գոյություն ունեցող գործելակերպերը, ստանդարտներն ու Միության իրավական ակտերը՝ Հանձնաժողովը կիրարկող ակտերի միջոցով սահմանում է ժամանակակից էլեկտրոնային կնիքների հղումների ձեւաչափերը կամ այլընտրանքային ձեւաչափերի օգտագործման դեպքում՝ հղումների մեթոդները: Այդ կիրարկող ակտերն ընդունվում են 48-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված ուսումնասիրության ընթացակարգի համաձայն:

Հոդված 38

Էլեկտրոնային կնիքների որակավորման հավաստագրերը

1. Էլեկտրոնային կնիքների որակավորման հավաստագրերը բավարարում են 3-րդ հավելվածում շարադրված պահանջները:

2. Էլեկտրոնային կնիքների որակավորման հավաստագրերի նկատմամբ չպետք է սահմանվի 3-րդ հավելվածում շարադրված պահանջներից բացի որեւէ հավելյալ պարտադիր պահանջ:

3. Էլեկտրոնային կնիքների որակավորման հավաստագրերը կարող են ներառել լրացուցիչ ոչ պարտադիր հատուկ հատկանիշներ: Այդ հատկանիշները չպետք է ազդեն որակավորված էլեկտրոնային ստորագրությունների փոխգործակցության եւ ճանաչման վրա:

4. Եթե էլեկտրոնային կնիքի որակավորման հավաստագիրը չեղարկվել է սկզբնական ակտիվացումից հետո, ապա այն կարող է կորցնել իր վավերականությունը չեղարկվելու պահից, եւ դրա կարգավիճակը ոչ մի դեպքում չի վերականգնվում:

5. Հետեւյալ պայմանների պահպանմամբ անդամ պետությունները կարող են սահմանել ազգային նորմեր՝ էլեկտրոնային կնիքների որակավորման հավաստագրերի ժամանակավոր կասեցման վերաբերյալ.

   ա) եթե էլեկտրոնային կնիքի որակավորման հավաստագիրը ժամանակավորապես կասեցվել է, ապա այդ հավաստագիրը կորցնում է իր վավերականությունը կասեցման ժամանակահատվածում,

   բ) կասեցման ժամանակահատվածը հստակ կերպով նշվում է հավաստագրերի տվյալների շտեմարանում, եւ կասեցման կարգավիճակը տեսանելի է կասեցման ժամանակահատվածում հավաստագրի կարգավիճակի մասին տեղեկատվություն տրամադրող ծառայության միջոցով:

6. Հանձնաժողովը կարող է կիրարկող ակտերի միջոցով սահմանել էլեկտրոնային կնիքների որակավորման հավաստագրերի ստանդարտների հերթական համարները: Ենթադրվում է, որ 3-րդ հավելվածում շարադրված պահանջները պահպանված են այն դեպքում, երբ էլեկտրոնային կնիքի որակավորման հավաստագիրը համապատասխանում է այդ ստանդարտներին: Այդ կիրարկող ակտերն ընդունվում են 48-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված ուսումնասիրության ընթացակարգի համաձայն:

Հոդված 39

Որակավորված էլեկտրոնային կնիքի ստեղծման հարմարանքներ

1. 29-րդ հոդվածը համապատասխան փոփոխություններով *(mutatis mutandis)* կիրառվում է որակավորված էլեկտրոնային կնիքի ստեղծման հարմարանքներին ներկայացվող պահանջների նկատմամբ:

2. 30-րդ հոդվածը համապատասխան փոփոխություններով (mutatis mutandis) կիրառվում է որակավորված էլեկտրոնային կնիքի ստեղծման հարմարանքների հավաստագրման նկատմամբ:

3. 31-րդ հոդվածը համապատասխան փոփոխություններով (mutatis mutandis) կիրառվում է որակավորված էլեկտրոնային կնիքի ստեղծման հավաստագրված հարմարանքների ցանկի հրապարակման նկատմամբ:

Հոդված 40

Որակավորված էլեկտրոնային կնիքների վավերականության ստուգումը եւ պահպանումը

32-րդ, 33-րդ եւ 34-րդ հոդվածները համապատասխան փոփոխություններով *(mutatis mutandis)* կիրառվում են որակավորված էլեկտրոնային կնիքների վավերականության ստուգման եւ պահպանման նկատմամբ:

ԲԱԺԻՆ 6

Էլեկտրոնային ժամանակի դրոշմակնիքները

Հոդված 41

Էլեկտրոնային ժամանակի դրոշմակնիքների իրավական ուժը

1. Էլեկտրոնային ժամանակի դրոշմակնիքը չպետք է զրկված լինի իրավական ուժից եւ դատական վարույթներում որպես ապացույց ճանաչվելուց բացառապես այն հիմքով, որ այն ներկայացված է էլեկտրոնային ձեւով կամ չի բավարարում որակավորված էլեկտրոնային ժամանակի դրոշմակնիքներին ներկայացվող պահանջները:

2. Որակավորված էլեկտրոնային ժամանակի դրոշմակնիքի համար պետք է գործի դրանով նշվող ամսաթվի եւ ժամի ճշգրտության եւ այն տվյալների ամբողջականության կանխավարկածը, որոնց համար նշված ամսաթիվը եւ ժամը պարտադիր են:

3. Մեկ անդամ պետության տարածքում տրամադրված որակավորված էլեկտրոնային ժամանակի դրոշմակնիքը ճանաչվում է որպես որակավորված էլեկտրոնային ժամանակի դրոշմակնիք բոլոր մյուս անդամ պետություններում:

Հոդված 42

Էլեկտրոնային ժամանակի դրոշմակնիքներին ներկայացվող պահանջները

1. Որակավորված էլեկտրոնային ժամանակի դրոշմակնիքը պետք է բավարարի հետեւյալ պահանջները.

ա) այն ամսաթիվն ու ժամանակը պետք է կապի տվյալների հետ այնպես, որ ողջամտորեն բացառվի տվյալների աննկատ փոփոխության հնարավորությունը,

բ) այն պետք է հիմնվի Համաշխարհային կոորդինացված ժամանակի հետ կապված ճշգրիտ ժամանակի աղբյուրների վրա, եւ

գ) այն պետք է ստորագրվի ժամանակակից էլեկտրոնային ստորագրության օգտագործմամբ կամ կնքվի որակավորված տրաստային ծառայություն մատուցողի ժամանակակից էլեկտրոնային կնիքով կամ համարժեք մեթոդով:

2. Հանձնաժողովը կարող է կիրարկող ակտերի միջոցով սահմանել ստանդարտների հերթական համարներ՝ ամսաթիվն ու ժամանակը տվյալների հետ կապելու եւ ճշգրիտ ժամանակի աղբյուրները որոշելու համար: Ենթադրվում է, որ 1-ին պարբերությամբ սահմանված պահանջները պահպանված են այն դեպքում, երբ ամսաթիվն ու ժամանակը տվյալների հետ կապելու եւ ճշգրիտ ժամանակի աղբյուրները որոշելու գործընթացները համապատասխանում են այդ ստանդարտներին: Այդ կիրարկող ակտերն ընդունվում են 48-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված ուսումնասիրության ընթացակարգի համաձայն:

ԲԱԺԻՆ 7

Էլեկտրոնային եղանակով գրանցված առաքման ծառայություններ

Հոդված 43

Էլեկտրոնային եղանակով գրանցված առաքման ծառայությունների իրավական ուժը

1. Էլեկտրոնային գրանցված առաքման ծառայության միջոցով տվյալների ուղարկման եւ ստացման գործընթացը չպետք է զրկված լինի իրավական

ուժից եւ դատական վարույթներում որպես ապացույց ճանաչվելու հնարավորությունից բացառապես այն հիմքով, որ այն ներկայացված է էլեկտրոնային ձեւով կամ չի բավարարում որակավորված էլեկտրոնային գրանցված առաքման ծառայությանը ներկայացվող պահանջները:

2. Որակավորված էլեկտրոնային գրանցված առաքման ծառայության միջոցով ուղարկված եւ ստացված տվյալների համար պետք է գործի տվյալների ամբողջականության, նույնականացված ուղարկողի կողմից տվյալների ուղարկման, նույնականացված հասցեատիրոջ կողմից դրանց ստացման եւ որակավորված էլեկտրոնային գրանցված առաքման ծառայության միջոցով տվյալ ուղարկման եւ ստացման ամսաթվի եւ ժամանակի ճշգրտության կանխավարկածը:

Հոդված 44

Որակավորված էլեկտրոնային ստորագրության գրանցված առաքման ծառայություններին ներկայացվող պահանջները

1. Որակավորված էլեկտրոնային գրանցված առաքման ծառայությունները բավարարում են հետեւյալ պահանջները.

ա) դրանք մատուցվում են մեկ կամ մի քանի որակավորված տրաստային ծառայություն մատուցողի (մատուցողների) կողմից,

բ) դրանք վստահության բարձր մակարդակով ապահովում են ուղարկողի նույնականացումը,

գ) դրանք ապահովում են հասցեատիրոջ նույնականացումը նախքան տվյալների ուղարկումը,

դ) տվյալների ուղարկումը եւ ստացումը ապահովված է ժամանակակից էլեկտրոնային ստորագրությամբ կամ որակավորված տրաստային ծառայություն մատուցողի ժամանակակից էլեկտրոնային կնիքով

այնպես, որ բացառվի տվյալների աննկատ փոփոխության հնարավորությունը,

ե) տվյալների ուղարկման կամ ստացման համար անհրաժեշտ տվյալների ցանկացած փոփոխության մասին հստակորեն տեղեկացվում է տվյալներն ուղարկողին եւ հասցեատիրոջը,

զ) ուղարկման, ստացման ամսաթիվը եւ ժամանակը եւ տվյալների ցանկացած փոփոխություն նշվում է որակավորված էլեկտրոնային ժամանակի դրոշմակնիքի միջոցով:

Այն դեպքում, երբ տվյալները փոխանցվում են երկու կամ ավելի որակավորված տրաստային ծառայություն մատուցողների միջեւ, «ա» եւ «զ» կետերի պահանջները կիրառվում են բոլոր որակավորված տրաստային ծառայություն մատուցողների նկատմամբ:

2. Հանձնաժողովը կարող է կիրարկող ակտերի միջոցով սահմանել տվյալների ուղարկման եւ ստացման գործընթացների մասով ստանդարտների հերթական համարները: Ենթադրվում է, որ 1-ին պարբերությամբ սահմանված պահանջները պահպանված են այն դեպքում, երբ տվյալների ուղարկման եւ ստացման գործընթացը համապատասխանում է այդ ստանդարտներին: Այդ կիրարկող ակտերն ընդունվում են 48-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված ուսումնասիրության ընթացակարգի համաձայն:

ԲԱԺԻՆ 8

Կայքի իսկորոշում

Հոդված 45

Կայքի իսկորոշման որակավորման հավաստագրերին ներկայացվող պահանջները

1. Կայքի իսկորոշման որակավորման հավաստագրերը պետք է բավարարեն IV հավելվածով սահմանված պահանջները:

2. Հանձնաժողովը կարող է կիրարկող ակտերի միջոցով սահմանել կայքի իսկորոշման որակավորման հավաստագրերի ստանդարտների հերթական համարները: Ենթադրվում է, որ 4-րդ հավելվածում շարադրված պահանջները պահպանված են այն դեպքում, երբ կայքի իսկորոշման որակավորման հավաստագիրը համապատասխանում է այդ ստանդարտներին: Այդ կիրարկող ակտերն ընդունվում են 48-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված ուսումնասիրության ընթացակարգի համաձայն:

ԳԼՈՒԽ IV

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հոդված 46

էլեկտրոնային փաստաթղթերի իրավական ուժը

Էլեկտրոնային փաստաթուղթը չպետք է զրկվի իրավական ուժից եւ դատական վարույթում որպես ապացույց ճանաչվելու հնարավորությունից բացառապես այն հիմքով, որ այն ներկայացված է էլեկտրոնային ձեւով:

ԳԼՈՒԽ V

ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒՄ ԵՎ ԿԻՐԱՐԿՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 47

Պատվիրակելը

1. Պատվիրակված ակտեր ընդունելու լիազորությունը վերապահվում է Հանձնաժողովին՝ սույն հոդվածով սահմանված պայմանների համաձայն:

2. 30-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված պատվիրակված ակտերն ընդունելու լիազորությունը վերապահվում է Հանձնաժողովին անորոշ ժամկետով՝ սկսած 2014 թվականի սեպտեմբերի 17-ից:

3. Եվրոպական պառլամենտն ու Խորհուրդը կարող են ցանկացած պահի չեղյալ հայտարարել 30-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված լիազորությունների պատվիրակումը: Չեղյալ հայտարարելու մասին որոշմամբ դադարեցվում է այդ որոշմամբ նախատեսված լիազորությունների պատվիրակումը: Այն ուժի մեջ է մտնում այդ որոշումը *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* հրապարակվելուն հաջորդող օրը կամ դրանում նշված ավելի ուշ ժամկետում: Այն չի ազդում արդեն ուժի մեջ մտած պատվիրակված ակտերի վավերականության վրա:

4. Պատվիրակված ակտն ընդունելուց անմիջապես հետո Հանձնաժողովն այդ մասին միաժամանակ ծանուցում է Եվրոպական պառլամենտին եւ Խորհրդին:

5. 30-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն ընդունված պատվիրակված ակտն ուժի մեջ է մտնում միայն այն դեպքում, երբ Եվրոպական պառլամենտի կամ Խորհրդի կողմից այդ ակտի մասին ծանուցումն ստանալուց հետո 2 ամսվա ընթացքում առարկություն չի ներկայացվում, կամ եթե նախքան այդ ժամկետի ավարտն ինչպես Եվրոպական պառլամենտը, այնպես էլ

Խորհուրդը տեղեկացնում են Հանձնաժողովին այն մասին, որ չեն պատրաստվում առարկել: Այդ ժամկետը երկարաձգվում է 2 ամսով՝ Եվրոպական պառլամենտի կամ Խորհրդի նախաձեռնությամբ:

Հոդված 48

Կոմիտեի աշխատակարգը

1. Հանձնաժողովին աջակցում է կոմիտեն: Որպես այդպիսի կոմիտե է համարվում թիվ 182/2011 կանոնակարգի (ԵՄ) իմաստով սահմանված կոմիտեն:

2. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում է թիվ 182/2011 կանոնակարգի (ԵՄ) 5-րդ հոդվածը:

ԳԼՈՒԽ VI

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 49

Վերանայումը

Հանձնաժողովը վերանայում է սույն կանոնակարգի կիրառումը եւ Եվրոպական պառլամենտին եւ Խորհրդին զեկուցում է այդ մասին ոչ ուշ, քան մինչեւ 2020 թվականի հուլիսի 1-ը: Հանձնաժողովը մասնավորապես գնահատում է, թե արդյոք տեղին է փոփոխության ենթարկել սույն կանոնակարգի շրջանակը կամ դրա կոնկրետ դրույթները, այդ թվում՝ 6-րդ հոդվածը, 7-րդ հոդվածի «զ» կետը եւ 34-րդ, 43-րդ, 44-րդ եւ 45-րդ հոդվածները՝ հաշվի առնելով սույն կանոնակարգի կիրառման արդյունքում ձեռք բերված փորձը, ինչպես նաեւ տեխնոլոգիական, շուկայի եւ իրավական զարգացումները:

Առաջին պարբերության մեջ նշված հաշվետվությունը անհրաժեշտության դեպքում պետք է ուղեկցվի օրենսդրական առաջարկություններով:

Ի լրումն դրա՝ Հանձնաժողովը յուրաքանչյուր չորս տարին մեկ զեկույց է ներկայացնում Եվրոպական պառլամենտ եւ Խորհուրդ առաջին պարբերությամբ նախատեսված՝ սույն կանոնակարգի նպատակների իրագործման առաջընթացի մասին զեկույցից հետո:

Հոդված 50

Ուժը կորցրած ճանաչելը

1. Թիվ 1999/93/ԵՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում 2016 թվականի հուլիսի 1-ից:

2. Ուժը կորցրած ճանաչված հրահանգին կատարվող հղումները համարվում են սույն հրահանգին կատարվող հղումներ:

Հոդված 51

Անցումային միջոցները

1. Անվտանգ ստորագրության ստեղծման հարմարանքները, որոնց համապատասխանությունը որոշվել է թիվ 1999/93/ԵՀ հրահանգի 3-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան, համարվում են սույն կանոնակարգի իմաստով որակավորված էլեկտրոնային ստորագրության ստեղծման միջոցներ:

2. Թիվ 1999/93/ԵՀ հրահանգի շրջանակներում ֆիզիկական անձանց տրամադրված որակավորման հավաստագրերը համարվում են սույն կանոնակարգի իմաստով էլեկտրոնային ստորագրությունների որակավորման հավաստագրեր մինչեւ դրանց գործողության ավարտը:

3. Թիվ 1999/93/ԵՀ հրահանգի շրջանակներում որակավորման հավաստագրեր տրամադրող հավաստագրման ծառայություն մատուցողը հնարավորինս շուտ, բայց ոչ ուշ, քան մինչեւ 2017 թվականի հուլիսի 1-ը վերահսկողություն իրականացնող մարմին է ներկայացնում համապատասխանության գնահատման հաշվետվություն: Մինչեւ այդ համապատասխանության գնահատման հաշվետվությունը ներկայացնելը եւ վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից իրականացվող այդ գնահատման գործընթացի ավարտը հավաստագրման ծառայություն մատուցողը համարվում է սույն կանոնակարգի իմաստով որակավորված տրաստային ծառայություն մատուցող:

4. Եթե թիվ 1999/93/ԵՀ հրահանգի շրջանակներում որակավորման հավաստագրեր տրամադրող՝ հավաստագրման ծառայություն մատուցողը համապատասխանության գնահատման հաշվետվությունը չի ներկայացնում վերահսկողություն իրականացնող մարմին 3-րդ պարբերությամբ նախատեսված ժամկետում, ապա այդ հավաստագրման ծառայություն մատուցողը չի համարվում սույն կանոնակարգի իմաստով որակավորված տրաստային ծառայություն մատուցող՝ սկսած 2017 թվականի հուլիսի 2-ից:

Հոդված 52

Ուժի մեջ մտնելը

1. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* դրա հրապարակման օրվան հաջորդող քսաներորդ օրը:

2. Սույն կանոնակարգը կիրառվում է 2016 թվականի հուլիսի 1-ից՝ բացառությամբ հետեւյալի.

   ա) 8-րդ հոդվածի 3-րդ կետ, 9-րդ հոդվածի 5-րդ կետ, 12-րդ հոդվածի 2-9-րդ կետեր, 17-րդ հոդվածի 8-րդ կետ, 19-րդ հոդվածի 4-րդ կետ, 20-րդ

հոդվածի 4-րդ կետ, 21-րդ հոդվածի 4-րդ կետ, 22-րդ հոդվածի 5-րդ կետ, 23-րդ հոդվածի 3-րդ կետ, 24-րդ հոդվածի 5-րդ կետ, 27-րդ հոդվածի 4-րդ եւ 5-րդ կետեր, 28-րդ հոդվածի 6-րդ կետ, 29-րդ հոդվածի 2-րդ կետ, 30-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետեր, 31-րդ հոդվածի 3-րդ կետ, 32-րդ հոդվածի 3-րդ կետ, 33-րդ հոդվածի 2-րդ կետ, 34-րդ հոդվածի 2-րդ կետ, 37-րդ հոդվածի 4-րդ եւ 5-րդ կետեր, 38-րդ հոդվածի 6-րդ կետ, 42-րդ հոդվածի 2-րդ կետ, 44-րդ հոդվածի 2-րդ կետ, 45-րդ հոդվածի 2-րդ կետ եւ 47-րդ ու 48-րդ հոդվածներ, որոնք կիրառվում են 2014 թվականի սեպտեմբերի 17-ից,

բ) 7-րդ հոդվածը, 8-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերը, 9-րդ, 10-րդ, 11-րդ հոդվածները եւ 12-րդ հոդվածի 1-ին կետը կիրառվում են 8-րդ հոդվածի 3-րդ կետով եւ 12-րդ հոդվածի 8-րդ կետով նախատեսված կիրարկող ակտերի կիրառման օրվանից,

գ) 6-րդ հոդվածը կիրառվում է 8-րդ հոդվածի 3-րդ կետով եւ 12-րդ հոդվածի 8-րդ կետով նախատեսված կիրարկող ակտերի կիրառման օրվանից երեք տարի հետո:

3. Եթե ծանուցված էլեկտրոնային նույնականացման համակարգը ներառված է 9-րդ հոդվածի համաձայն Հանձնաժողովի կողմից հրապարակված ցանկում մինչեւ սույն հոդվածի 2-րդ պարբերության «գ» կետով նախատեսված օրը, ապա 6-րդ հոդվածի համաձայն այդ համակարգի շրջանակներում էլեկտրոնային նույնականացման միջոցների ճանաչումը տեղի է ունենում այդ համակարգի վերաբերյալ հրապարակումից ոչ ուշ, քան 12 ամիս հետո, սակայն նախքան սույն հոդվածի 2-րդ պարբերության «գ» կետով նախատեսված օրը:

4. Հաշվի չառնելով սույն հոդվածի 2-րդ պարբերության «գ» կետը՝ անդամ պետությունը կարող է որոշել, որ այլ անդամ պետության կողմից 9-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ծանուցված էլեկտրոնային նույնականացման

համակարգով սահմանված էլեկտրոնային նույնականացման միջոցներն առաջին անդամ պետության կողմից ճանաչվեն՝ 8-րդ հոդվածի 3-րդ կետով եւ 12-րդ հոդվածի 8-րդ կետով նախատեսված կիրարկող ակտերի կիրառման օրվանից սկսած: Համապատասխան անդամ պետությունները պետք է այդ մասին տեղեկացնեն Հանձնաժողովին: Հանձնաժողովը պետք է նշված տեղեկությունները հասանելի դարձնի հանրությանը:

Սույն կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր եւ ուղղակիորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Բրյուսելում 2014 թվականի հուլիսի 23-ին:

Պառլամենտի կողմից՝	*Խորհրդի կողմից՝*
Նախագահ	*Նախագահ*
Մ. ՇՈՒԼՑ	Ս. ԳՈՋԻ

ՀԱՎԵԼՎԱԾ I

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Էլեկտրոնային ստորագրությունների որակավորման հավաստագրերը պարունակում են՝

ա) նշում՝ առնվազն ավտոմատացված մշակման համար հարմար ձեւով, այն մասին, որ հավաստագիրը տրամադրվել է որպես էլեկտրոնային ստորագրության որակավորման հավաստագիր,

բ) տվյալների խումբ, որը միանշանակ ներկայացնում է որակավորման հավաստագրեր տրամադրող՝ որակավորված տրաստային ծառայություն մատուցողին, այդ թվում ՝ առնվազն այն անդամ պետությանը, որտեղ հիմնադրված է այդ մատուցողը, եւ

— իրավաբանական անձի համար՝ անունը եւ անհրաժեշտության դեպքում՝ ծառայողական փաստաթղթերում նշված գրանցման համարը,

— ֆիզիկական անձի դեպքում՝ անձի անունը,

գ) ստորագրող անձի առնվազն անունը կամ կեղծանունը. կեղծանուն օգտագործելու դեպքում դրա մասին պետք է հստակ նշվի,

դ) էլեկտրոնային ստորագրության վավերականության ստուգման տվյալները, որոնք համապատասխանում են էլեկտրոնային ստորագրության ստեղծման տվյալներին,

ե) հավաստագրի վավերականության ժամկետի սկզբի եւ ավարտի մասին մանրամասն տվյալներ,

զ) հավաստագրի նույնականացման ծածկագիրը, որը պետք է եզակի լինի որակավորված տրաստային ծառայություն մատուցողի համար,

է) ժամանակակից էլեկտրոնային ստորագրություն կամ ժամանակակից էլեկտրոնային կնիք տրամադրող՝ որակավորված տրաստային ծառայություն մատուցողի ժամանակակից էլեկտրոնային ստորագրությունը կամ ժամանակակից էլեկտրոնային կնիքը,

ը) այն վայրը, որտեղ «է» կետով նախատեսված ժամանակակից էլեկտրոնային ստորագրությունը կամ ժամանակակից էլեկտրոնային կնիքը հաստատող հավաստագիրը հասանելի է անվճար հիմունքներով,

թ) այն ծառայությունների վայրը, որոնք կարող են օգտագործվել որակավորման հավաստագրի վավերականության կարգավիճակը հայցելու համար,

ժ) եթե էլեկտրոնային ստորագրության վավերականության ստուգման տվյալների հետ կապված էլեկտրոնային ստորագրության ստեղծման տվյալները գտնվում են որակավորված էլեկտրոնային ստորագրության ստեղծման հարմարանքում, ապա դրա վերաբերյալ պատշաճ կերպով նշումը՝ առնվազն ավտոմատացված մշակման համար հարմար ձևով:

ՀԱՎԵԼՎԱԾ II

ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՐՄԱՐԱՆՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Որակավորված էլեկտրոնային ստորագրության ստեղծման հարմարանքները համապատասխան տեխնիկական եւ ընթացակարգային միջոցներով ապահովում են, որ առնվազն՝

   ա) հիմնավոր կերպով երաշխավորվի էլեկտրոնային ստորագրության ստեղծման համար օգտագործվող էլեկտրոնային ստորագրության ստեղծման տվյալների գաղտնիությունը,

   բ) էլեկտրոնային ստորագրության ստեղծման համար կիրառվող էլեկտրոնային ստորագրության ստեղծման տվյալները հնարավոր լինի գործնականում գեներացնել միայն մեկ անգամ,

   գ) էլեկտրոնային ստորագրության ստեղծման համար կիրառվող էլեկտրոնային ստորագրության ստեղծման տվյալները հիմնավոր երաշխավորմամբ հնարավոր չլինի ստանալ, եւ որ էլեկտրոնային ստորագրությունը հուսալիորեն պաշտպանված լինի առկա տեխնոլոգիաների օգտագործմամբ կատարվող կեղծումներից,

   դ) օրինական ստորագրող անձը հնարավորություն ունենա այլ սուբյեկտների կողմից օգտագործումից հուսալիորեն պաշտպանել էլեկտրոնային ստորագրության ստեղծման համար օգտագործվող էլեկտրոնային ստորագրության ստեղծման տվյալները:

2. Որակավորված էլեկտրոնային ստորագրության ստեղծման հարմարանքները չպետք է փոփոխեն ստորագրման ենթակա տվյալները կամ խոչընդոտեն նախքան ստորագրումը այդ տվյալների ներկայացումը ստորագրող անձին:

3. Ստորագրող անձի անունից էլեկտրոնային ստորագրության ստեղծման տվյալների գեներացումը կամ կառավարումը կարող է իրականացվել միայն որակավորված տրաստային ծառայություն մատուցողի կողմից:

4. Չհակասելով 1-ին կետի «դ» ենթակետին՝ ստորագրող անձի անունից էլեկտրոնային ստորագրության ստեղծման տվյալները կառավարող՝ որակավորված տրաստային ծառայություն մատուցողները կարող են կրկնօրինակել էլեկտրոնային ստորագրության ստեղծման տվյալները միայն պահուստավորման նպատակով՝ պայմանով, որ կատարվեն հետեւյալ պահանջները.

   ա) կրկնօրինակված տվյալների խմբի համար պետք է նախատեսված լինի անվտանգության նույն մակարդակը, ինչ բնօրինակ տվյալների խմբի համար,

   բ) կրկնօրինակված տվյալների խմբերի թիվը չպետք է գերազանցի ծառայության շարունակականության ապահովման համար անհրաժեշտ նվազագույն թիվը:

ՀԱՎԵԼՎԱԾ III

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆԻՔՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Էլեկտրոնային կնիքների որակավորման հավաստագրերը պարունակում են՝

ա) նշում՝ առնվազն ավտոմատացված մշակման համար հարմար ձեւով, այն մասին, որ հավաստագիրը տրամադրվել է որպես էլեկտրոնային կնիքի որակավորման հավաստագիր,

բ) տվյալների խումբ, որով միանշանակ ներկայացվում է որակավորման հավաստագրեր տրամադրող՝ որակավորված տրաստային ծառայություն մատուցողը, այդ թվում՝ առնվազն այն անդամ պետությունը, որտեղ հիմնադրված է այդ մատուցողը, եւ

— իրավաբանական անձի համար՝ անունը եւ անհրաժեշտության դեպքում՝ ծառայողական փաստաթղթերում նշված գրանցման համարը,

— ֆիզիկական անձի դեպքում՝ անձի անունը,

գ) կնիքը ստեղծողի առնվազն անունը եւ անհրաժեշտության դեպքում՝ ծառայողական փաստաթղթերում նշված գրանցման համարը,

դ) էլեկտրոնային կնիքի վավերականության ստուգման տվյալները, որոնք համապատասխանում են էլեկտրոնային կնիքի ստեղծման ամսաթվին,

ե) հավաստագրի վավերականության ժամկետի սկզբի եւ ավարտի մասին տվյալներ,

զ) հավաստագրի նույնականացման ծածկագիրը, որը պետք է եզակի լինի որակավորված տրաստային ծառայություն մատուցողի համար,

է) ժամանակակից էլեկտրոնային ստորագրություն կամ ժամանակակից էլեկտրոնային կնիք տրամադրող՝ որակավորված տրաստային ծառայություն մատուցողի ժամանակակից էլեկտրոնային ստորագրությունը կամ ժամանակից էլեկտրոնային կնիքը,

ը) այն վայրը, որտեղ «է» կետով նախատեսված ժամանակակից էլեկտրոնային ստորագրությունը կամ ժամանակակից էլեկտրոնային կնիքը հաստատող հավաստագիրը հասանելի է անվճար հիմունքներով,

թ) այն ծառայությունների մատուցման վայրը, որոնք կարող են օգտագործվել որակավորման հավաստագրի վավերականության կարգավիճակը հայցելու համար,

ժ) եթե էլեկտրոնային կնիքի վավերականության ստուգման տվյալների հետ կապված էլեկտրոնային կնիքի ստեղծման տվյալները գտնվում են որակավորված էլեկտրոնային կնիքի ստեղծման հարմարանքում, ապա դրա պատշաճ կերպով նշումը՝ առնվազն ավտոմատացված մշակման համար հարմար ձեւով:

_____

ՀԱՎԵԼՎԱԾ IV

ԿԱՅՔԻ ԻՍԿՈՐՈՇՄԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Կայքի իսկորոշման որակավորման հավաստագրերը պարունակում են՝

ա) նշում՝ առնվազն ավտոմատացված մշակման համար հարմար ձեւով, այն մասին, որ հավաստագիրը տրամադրվել է որպես կայքի իսկորոշման որակավորման հավաստագիր,

բ) տվյալների խումբ, որով միանշանակ ներկայացվում է որակավորման հավաստագրեր տրամադրող՝ որակավորված տրաստային ծառայություն մատուցողը, այդ թվում՝ առնվազն այն անդամ պետությունը, որտեղ հիմնադրված է այդ մատուցողը, եւ

— իրավաբանական անձի համար՝ անունը եւ անհրաժեշտության դեպքում՝ ծառայողական փաստաթղթերում նշված գրանցման համարը,

— ֆիզիկական անձի դեպքում՝ անձի անունը,

գ) ֆիզիկական անձի համար՝ առնվազն այն անձի անունը կամ կեղծանունը, որին տրամադրվել է հավաստագիրը: Կեղծանուն օգտագործելու դեպքում այդ մասին պետք է հստակ նշվի, իրավաբանական անձանց համար՝ այն իրավաբանական անձի առնվազն անունը եւ անհրաժեշտության դեպքում՝ ծառայողական փաստաթղթերում նշված գրանցման համարը, որին տրամադրվել է հավաստագիրը,

դ) հասցեի տարրերը, այդ թվում՝ այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի առնվազն քաղաքը եւ պետությունը եւ անհրաժեշտության դեպքում՝ ծառայողական փաստաթղթերում նշված գրանցման համարը, որին տրամադրվել է հավաստագիրը,

ե) այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից գործարկվող տիրույթի անունը (անվանումը), որին տրամադրվել է հավաստագիրը,

զ) հավաստագրի վավերականության ժամկետի սկզբի եւ ավարտի մասին մանրամասներ,

է) հավաստագրի նույնականացման ծածկագիրը, որը պետք է եզակի լինի որակավորված տրաստային ծառայություն մատուցողի համար,

ը) ժամանակակից էլեկտրոնային ստորագրություն կամ ժամանակակից էլեկտրոնային կնիք տրամադրող՝ որակավորված տրաստային ծառայություն մատուցողի ժամանակակից էլեկտրոնային ստորագրությունը կամ ժամանակից էլեկտրոնային կնիքը,

թ) այն վայրը, որտեղ «ը» կետով նախատեսված ժամանակակից էլեկտրոնային ստորագրությունը կամ ժամանակակից էլեկտրոնային կնիքը հաստատող հավաստագիրը հասանելի է անվճար հիմունքներով,

ժ) հավաստագրի վավերականության կարգավիճակի ստուգման այն ծառայությունների մատուցման վայրը, որոնք կարող են օգտագործվել որակավորման հավաստագրի վավերականության կարգավիճակը հայցելու համար:

_____